ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017

02.2017

03.2017

04.2017

05.2017

06.2017

07.2017

08.2017

09.2017

10.2017
Հոկտեմբեր

11.2017

12.2017

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Հոկտեմբեր
թիվ 10 (230)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՉԱՆԳԱՅ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի «Կենտրոն» և «Էրեբունի» մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 6 գրավատան, 1 ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու, 1 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 191-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 312-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 201-Ն որոշումը «Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 202-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 203-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 204-Ն որոշումը «Ածանցյալ ֆինանսական գործարքների գրանցման կարգն ու ժամկետները, գրանցամատյանի վարման, տեղեկությունների ներկայացման, պահպանման, տրամադրման կարգն ու պայմանները» կանոնակարգ 4/20-ը հաստատելու մասին»

56 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 205-Ն որոշումը «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը հաստատելու մասին»

57 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 207-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

85 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 208-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

100 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 209-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

119 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 210-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

137 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 211-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

155 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 227-Ն որոշումը «2018 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

161 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 229-Ն որոշումը «2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» ՀՀ հավաքորդական թղթադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

163 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառվել է*** «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Արմավիր 2» մասնաճյուղը (որոշում թիվ 232Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՋԱՆԳԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 233Ա):
- ***Գրանցվել են*** «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի «Կենտրոն» և «Էրեբունի» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/835Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 6 գրավատների, 1 ՈՒՎԿ ՓԲԸ նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ **1423000** դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/805Ա, 1/818Ա, 1/819Ա, 1/820Ա, 1/826Ա, 1/839Ա, 1/857Ա), 1 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/841Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 312-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել ապահովագրական ընկերությունների կողմից ձևավորվող տեխնիկական պահուստների ճշգրտության մակարդակը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը ո ր ո շ ու մ ե ն.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 312-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի օգոստոսի 31-ի թիվ 219-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 660-Ն հրամանով հաստատված Հավելվածի՝ «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 8-րդ կետում «Ապահովագրողը կարող է» բառերից հետո լրացնել «ապահովագրության առանձին դասերի գծով» բառերը,
2) Կանոնակարգի 9-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «9. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված համաձայնությունը տալու կամ այն մերժելու մասին որոշումը կայացվում է ապահովագրողի դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»,
3) Կանոնակարգի 10-րդ կետից հանել «10-օրյա» բառը,
4) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1 և 10.2 կետերով.
   «10.1. Սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն տրված Կենտրոնական բանկի համաձայնությունը կարող է Կենտրոնական բանկի կողմից չեղյալ համարվել, եթե համաձայնությունը տալուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց արդյունքում ձևավորված տեխնիկական պահուստները Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով բավարար չեն կամ բավարար չեն լինի ստանձնած պարտավորությունների կատարման և հնարավոր ռիսկերի ծածկման համար: Մինչև համաձայնությունը չեղյալ համարելու որոշում կայացնելը Կենտրոնական բանկը այն քննարկում է ապահովագրողի հետ: Համաձայնությունը չեղյալ է համարվում Կենտրոնական բանկի կողմից այդ մասին ապահովագրողին ծանուցելուց հետո 10-րդ աշխատանքային օրը, եթե այլ ժամկետ սահմանված չէ ապահովագրողին ուղղված ծանուցման մեջ:
   10.2. Կենտրոնական բանկը կարող է պահանջել ապահովագրողից ձևավորել սույն կանոնակարգով չնախատեսված լրացուցիչ պահուստներ կամ սույն կանոնակարգով նախատեսված պահուստները ապահովագրության առանձին դասերի համար հաշվարկել սույն կանոնակարգով չնախատեսված մեթոդներով, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ձևավորված տեխնիկական պահուստները բավարար չեն կամ բավարար չեն լինի ստանձնած պարտավորությունների կատարման և հնարավոր ռիսկերի ծածկման համար:»,
5) Կանոնակարգի 18-րդ կետում «ՉԱՊ-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով» բառերը փոխարինել «երբ ապահովագրավճարի չափը և(կամ) պայմանագրի գործողության ժամկետը մնում են անփոփոխ պայմանագրի գործողության ընթացքում, տվյալ պայմանագրի գծով ՉԱՊ-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով» բառերով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.10. 2017 թ. (ՀՀԳՏ N31 (600), 15.11.2017):

6) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1 կետով.

«18.1. Երբ ապահովագրավճարի չափը և(կամ) պայմանագրի գործողության ժամկետը փոփոխվում են պայմանագրի գործողության ընթացքում, տվյալ պայմանագրի գծով ՉԱՊ-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՉԱՊ}_i = (\text{ՉԱՊ}_{to}+\text{Ա}_{\text{փոփ}}) * \text{ՉՕ}_i/\text{ՊՕ}_i,$$ որտեղ`

ՉԱՊ_i - *i-րդ պայմանագրի գծով չվաստակած ապահովագրավճարի պահուստի չափն է,*

ՉԱՊ_{to} - *i-րդ պայմանագրի գծով չվաստակած ապահովագրավճարի պահուստի չափն է` ապահովագրավճարի չափի և/կամ պայմանագրի գործողության ժամկետի փոփոխության օրվա դրությամբ,*

$\text{Ա}_{\text{փոփ}}$ - *i-րդ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի (վերաապահովագրության ընդունած պայմանագրերի դեպքում` վերաապահովագրավճարի, իսկ համաապահովագրության դեպքում` i-րդ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի` տվյալ ապահովագրողի մասնաբաժնի) փոփոխության չափն է` առանց նվազեցնելու ապահովագրավճարի փոփոխման պահին ապահովագրողի կողմից տրամադրված զեղչերը,*

ՉՕ_i - *i-րդ պայմանագրի գծով չլրացած օրերի քանակն է ՉԱՊ-ի հաշվարկման օրվա դրությամբ` հաշվի առնելով պայմանագրի գործողության ժամկետի փոփոխությունը (առկայության դեպքում),*

ՊՕ_i - *i-րդ պայմանագրի ապահովագրավճարի և(կամ) գործողության ժամկետի փոփոխությունից մինչև պայմանագրի գործողության ավարտն ընկած ժամանակահատվածն է` օրերով` հաշվի առնելով պայմանագրի գործողության ժամկետի փոփոխությունը (առկայության դեպքում):»,*

7) Կանոնակարգի 24-րդ կետում «Ապահովագրական հատուցումների գծով ապահովագրողին ներկայացված» բառերը փոխարինել «ՆՉՊՊ-ի հաշվարկման ***«դեպք առ դեպք»*** մեթոդը կիրառելիս ապահովագրական հատուցումների գծով ապահովագրողին ներկայացված» բառերով,

8) Կանոնակարգի 37-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «և/կամ պայմանագրի վերակնքման դեպքում կատարել ապահովագրավճարի (վերաապահովագրության ընդունած պայմանագրերի դեպքում` վերաապահովագրավճարի) նվազեցումներ» բառերը,

9) Կանոնակարգի 41-րդ կետում վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ` «$\text{ՎՆ}_{\text{միջ}}$ - վերլուծվող ժամանակահատվածի տարիների վնասաբերության միջին ցուցանիշն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՎՆ}_{\text{միջ}} = \begin{cases} \dfrac{\sum_{\text{տ}=1}^{n} \text{Հ}_{\text{տ}}}{\sum_{\text{տ}=1}^{n} \text{ՎԱ}_{\text{տ}}}, \text{ եթե վերլուծվող ժամանակահատվածի տարիներից յուրաքանչյուրի համար } \text{ՎԱ}_{\text{տ}} > 0 \\ \dfrac{\sum_{\text{տ}=1}^{n} \text{ՎՆ}_{\text{տ}}}{n}, \text{ եթե վերլուծվող ժամանակահատվածի տարիներից որևէ մեկի համար } \text{ՎԱ}_{\text{տ}} \leq 0 \end{cases}$$

որտեղ`

n - *վերլուծվող ժամանակահատվածի տարիների քանակ,*

$\text{Հ}_{\text{տ}}$, $\text{ՎԱ}_{\text{տ}}$, $\text{ՎՆ}_{\text{տ}}$ - *սույն գլխի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ:»,*

10) Կանոնակարգի 43-րդ կետում`

1) «(նվազեցված վերաապահովագրողների մասնաբաժնի չափով)» բառերից հետո լրացնել «, կարգավորման ծախսերի» բառերը,

2) «Վնտ = (Հտ / ՎԱտ) * 100» բանաձևը փոխարինել «$\text{ՎՆ}_{\text{տ}} = (\text{Հ}_{\text{տ}} / \text{ՎԱ}_{\text{տ}}) * 100\%$» բանաձևով,

11) Կանոնակարգի 44-րդ կետում «$\text{ՎՆ}_{\text{տ}} = 100$» բառերը փոխարինել «$\text{ՎՆ}_{\text{տ}} = 100\%$» բառերով,

12) Կանոնակարգի 46-րդ կետի 2-րդ ենթակետում «5» թիվը փոխարինել «5%» թվով,

13) Կանոնակարգի 47-րդ կետում բոլոր «100» թվերը փոխարինել «100%» թվով,

14) Կանոնակարգի 59-րդ կետում «i-րդ ապահովագրության պայմանագրի գծով $\text{Վ}_{\text{ՉԱՊ}}$-ը հաշվարկվում է հետևյալ կերպ» բառերը փոխարինել «երբ վերաապահովագրավճարի չափը և(կամ) վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը մնում են անփոփոխ վերաապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, տվյալ պայմանագրի գծով $\text{Վ}_{\text{ՉԱՊ}}$-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.» բառերով,

15) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 59.1 կետով.

«59.1. Երբ վերաապահովագրավճարի չափը և(կամ) վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը փոփոխվում է վերաապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, տվյալ պայմանագրի գծով $\text{Վ}_{\text{ՉԱՊ}}$-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Վ_{ՉԱՊi} = (Վ_{ՉԱՊto} + ՎԱ_{փոփ}) * ՎՉՕ_i/ՎՊՕ_i,$$

որտեղ՝

$Վ_{ՉԱՊi}$	*- i-րդ պայմանագրի գծով չվաստակած ապահովագրավճարի պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափն է,*
$Վ_{ՉԱՊto}$	*- i-րդ պայմանագրի գծով չվաստակած ապահովագրավճարի պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափն է՝ վերաապահովագրավճարի չափի և/կամ վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի փոփոխության օրվա դրությամբ,*
$ՎԱ_{փոփ}$	*- i-րդ պայմանագրի վերաապահովագրության գծով վերաապահովագրության պայմանագրով նախատեսված վերաապահովագրավճարի փոփոխության չափն է,*
$ՎՉՕ_i$	*- i-րդ պայմանագրի գծով վերաապահովագրության պայմանագրի չլրացած օրերի քանակն է $Վ_{ՉԱՊ}$-ի հաշվարկման օրվա դրությամբ՝ հաշվի առնելով վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի փոփոխությունը (առկայության դեպքում),*
$ՎՊՕ_i$	*- i-րդ պայմանագրի գծով վերաապահովագրության պայմանագրով սահմանված վերաապահովագրավճարի և(կամ) վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի փոփոխությունից մինչև վերաապահովագրության պայմանագրի գործողության ավարտն ընկած ժամանակահատվածն է՝ օրերով՝ հաշվի առնելով վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի փոփոխությունը (առկայության դեպքում): »,*

16) Կանոնակարգի 65-րդ կետում «9-րդ կետով» բառերը փոխարինել «3-րդ գլխով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
5 սեպտեմբերի 2017 թ., N 191-Ն

ՀՀ ֆինանսների նախարար Վ. Արամյան
29 սեպտեմբերի 2017 թ., N 498-Ն

*Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին**

Նպատակ ունենալով ձևավորված խնայողությունների միջոցով ապահովել ԱՊՊԱ ոլորտի ենթակառուցվածքների զարգացումը՝ միևնույն ժամանակ չվտանգելով Երաշխավորման ֆոնդի առջև դրված խնդիրների պատշաճ իրականացումը և Երաշխավորման ֆոնդի ֆինանսական կայունությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 2017 թվականի մայիսի 22-ի թիվ 32-Լ որոշմամբ ներկայացված առաջարկությունը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Երաշխավորման ֆոնդին կատարվող 2017 թվականի երկրորդ եռամսյակի վճարները չեն իրականացվում:
2. Երաշխավորման ֆոնդին կատարվող 2017 թվականի երրորդ, չորրորդ եռամսյակների և 2018 թվականի առաջին եռամսյակի վճարների իրականացումը դադարեցվում է:
3. Դադարեցումից հետո առաջին վճարումը կատարվելու է 2018 թվականի 2-րդ եռամսյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 սեպտեմբերի 2017 թ., N 201-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 09.10.2017 թ. (ՀՀԳՏ N29 (598)[1], 20.10.2017):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հաշվի առնելով ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի կողմից պետական պարտատոմսերի առաջնային աճուրդների՝ Զենիում ԱՅՆԵԹ առևտրային համակարգի միջոցով կազմակերպման գործառույթի ստանձնումը,

նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար ապահովել վերահսկողական, վիճակագրական և վերլուծական նպատակներով անհրաժեշտ պետական պարտատոմսերի աճուրդների կազմակերպման վերաբերյալ հաշվետվական ձևերը և դրանց լրացման առանձնահատկությունները,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ և 207-րդ հոդվածները, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը հաստատելու մասին» թիվ 356-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները ու լրացումները.

1) Կանոնակարգի 5-րդ կետով սահմանված աղյուսակը 14-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ տողով.

«

15.	Հաշվետվություն պետական պարտատոմսերի թողարկումների և աճուրդների վերաբերյալ	յուրաքանչյուր փոփոխության դեպքում

»,

2) Կանոնակարգի 6-րդ կետում «ՀԱՎԵԼՎԱԾ 10-ով» բառերը փոխարինել «ՀԱՎԵԼՎԱԾ 11-ով» բառերով,
3) Կանոնակարգի 14-րդ կետը «ավարտը» բառից հետո լրացնել «,իսկ Թիվ 15 հաշվետվությունը՝ մինչև յուրաքանչյուր փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվա ավարտը» բառերով,
4) Կանոնակարգի 27.1-րդ կետի.
   ա. 2-րդ ենթակետում ««ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»» բառերը փոխարինել ««սեփական» կամ «հաճախորդ»» բառերով,
   բ. 7-րդ ենթակետում «տեղաբաշխման) գինը» բառերը փոխարինել «տեղաբաշխման) գինը (ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները)» բառերով,
   գ. 13-րդ ենթակետում ««այլ»» բառը փոխարինել ««սեփական» կամ «հաճախորդ»» բառերով,
5) Կանոնակարգի 27.3-րդ կետի.
   ա. 2-րդ ենթակետում ««այլ»» բառը փոխարինել ««սեփական» կամ «հաճախորդ»» բառերով,
   բ. 13-րդ ենթակետում ««այլ»» բառը փոխարինել ««սեփական» կամ «հաճախորդ»» բառերով,
6) Կանոնակարգի 36-րդ կետում «2» թիվը փոխարինել «4» թվով,
7) Կանոնակարգի 37-րդ, 37.1-րդ և 37.2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37. Թիվ 11 հաշվետվության բոլոր աղյուսակները լրացվում են սույն կետի 1-ից 11-րդ ենթակետերով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան, ինչպես նաև յուրաքանչյուր աղյուսակի համար սույն կանոնակարգի 37.1-37.4 կետերով սահմանված լրացուցիչ կանոններին համապատասխան: Ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 09.10. 2017 թ. (ՀՀԳՏ N29 (598)[1], 20.10.2017):

դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով (5 նիշի ճշտությամբ), որով արտահայտված է շուկայի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված արժեթղթերի գինը.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է կարգավորվող շուկայի առևտրային համակարգ հայտերի, իսկ ռեպո գործարքների դեպքում՝ հասցեական առաջարկների մուտքագրման ամսաթիվը:
2) ***«Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում»*** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին շուկայի մասնակիցը (անդամը) կնքելու է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «սեփական» կամ «հաճախորդ»:
3) ***«Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) հաճախորդի ծածկագիրը»*** սույն սյունակում նշվում է կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) հաճախորդի ծածկագիրը, եթե հայտը ներկայացվել է հաճախորդի հաշվին:
4) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:
5) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային», «պետական» կամ «այլ»:
6) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով արտահայտված է շուկայի մասնակցի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված արժեթղթերի գինը:
7) ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»*** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:
8) ***«Արժեթղթերի ներկայացված քանակը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված արժեթղթերի քանակը՝ հատերով: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում: Ընդ որում՝
   ա. եթե որպես հայտի գործողություն լրացվում է «ներկայացում», ապա լրացվում է տվյալ հայտով ներկայացվող արժեթղթերի քանակը,
   բ. եթե որպես հայտի գործողություն լրացվում է հայտի «փոփոխություն», ապա լրացվում է փոփոխված արժեթղթերի քանակը,
   գ. եթե որպես հայտի գործողություն լրացվում է «գործարքի կնքում», ապա լրացվում է տվյալ հայտի նախորդող գործողությամբ (հայտի ներկայացում կամ հայտի փոփոխություն) ներկայացված արժեթղթերի քանակը, սակայն եթե նախորդող գործողությամբ տեղի է ունեցել գործարքի կնքում, որը մասնակի է բավարարվել, ապա տվյալ հայտով հերթական գործողության դեպքում որպես ներկայացված արժեթղթերի քանակը նշվում է նախորդ գործարքի արդյունքում հայտի մնացորդային արժեթղթերի քանակը,
   դ. եթե որպես հայտի գործողություն լրացվում է «օպերատորի կողմից հեռացում», «չբավարարված» կամ «մասնակցի կողմից հեռացում», ապա լրացվում է համապատասխանաբար օպերատորի կողմից հեռացված, չբավարարված կամ մասնակցի կողմից հեռացված արժեթղթերի քանակը:

9) ***«Արժեթղթերի բավարարված քանակը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերի (հասցեական առաջարկների) բավարարված մասի արժեթղթերի քանակը՝ հատերով: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
10) ***«Ներկայացված ծավալը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերում (հասցեական առաջարկում) նշված արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարը: Ընդ որում՝
   ա. եթե որպես հայտի գործողություն լրացվում է «ներկայացում», ապա լրացվում է տվյալ հայտով ներկայացվող ծավալը,
   բ. եթե որպես հայտի գործողություն լրացվում է հայտի «փոփոխություն», ապա լրացվում է փոփոխված ծավալը,
   գ. եթե որպես հայտի գործողություն լրացվում է «գործարքի կնքում», ապա լրացվում է տվյալ հայտի նախորդող գործողությամբ (հայտի ներկայացում կամ հայտի փոփոխություն) ներկայացված ծավալը, սակայն եթե նախորդող գործողությամբ տեղի է ունեցել գործարքի կնքում, որը մասնակի է բավարարվել, ապա տվյալ հայտով հերթական գործողության դեպքում որպես ներկայացված ծավալ նշվում է նախորդ գործարքի արդյունքում հայտի մնացորդային ծավալը,
   դ. եթե որպես հայտի գործողություն լրացվում է «օպերատորի կողմից հեռացում», «չբավարարված» կամ «մասնակցի կողմից հեռացում», ապա լրացվում է համապատասխանաբար օպերատորի կողմից հեռացված, չբավարարված կամ մասնակցի կողմից հեռացված ծավալը:
11) ***«Գործողության կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է գործողության կատարման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
12) ***«Գործողության կատարման ժամը»*** սյունակում լրացվում է ժամ:րոպե:վայրկյան:

37.1 Թիվ 11 հաշվետվության առաջին աղյուսակում լրացվում են արժեթղթերի առուվաճառքի հայտերի (բացառությամբ կորպորատիվ և պետական արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման աճուրդների և(կամ) թողարկումների համար աճուրդների մասնակիցների/թողարկողների կողմից ներկայացված հայտերի) վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.
1) ***«Հայտի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ հայտին տրված կոդը:
2) ***«Հայտ ներկայացրած մասնակցի (անդամի) կոդը»*** սյունակում լրացվում է հայտ ներկայացրած շուկայի մասնակցին (անդամին) Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
3) ***«Առևտրի մասնակցի կոդը»*** սյունակում նշվում է հայտ ներկայացրած շուկայի մասնակցի կողմից առևտրին մասնակցելու համար լիազորված այն ֆիզիկական անձի կոդը, որը շուկայի տվյալ մասնակցի անունից մասնակցում է առևտրին:
4) ***«Զուտ գինը»*** սյունակը լրացվում է միայն պարտատոմսերի համար, որտեղ նշվում է պարտատոմսի գինը՝ առանց հաշվեգրված տոկոսների՝ անվանական արժեքի 100 միավորի հաշվարկով:
5) ***«Արժեթղթի գինը»*** սյունակում պարտատոմսերի դեպքում լրացվում է արժեթղթի գինը (ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները)՝ անվանական արժեքի 100 միավորի հաշվարկով, բաժնետոմսերի դեպքում՝ մեկ բաժնետոմսի ամբողջական գինը:
6) ***«Բավարարված ծավալը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերի բավարարված մասի արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարը:
7) ***«Ներկայացված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հայտի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հայտի ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը:
8) ***«Բավարարված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հայտի բավարարված մասի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հայտի բավարարված մասի հիման վրա հաշվարկված ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը:
9) ***«Հայտի տեսակը՝ կախված գնային պայմաններից»*** սյունակում նշվում է «լիմիտային» կամ «շուկայական»:
10) ***«Հայտի տեսակը՝ կախված քանակական պայմաններից»*** սյունակում նշվում է «լրիվ բավարարմամբ» կամ «մասնակի բավարարմամբ»:
11) ***«Հայտի տեսակը՝ կախված ժամանակային պայմաններից»*** սյունակում նշվում է «պահել հերթում» կամ «հանել մնացորդը»:
12) ***«Հայտի տեսակը՝ կախված ակտիվացման պայմաններից»*** սյունակում նշվում է «անմիջապես ակտիվացմամբ» կամ «ստոպ»:

13) ***«Հայտով նախատեսված գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «արժեթղթերի առք» կամ «արժեթղթերի վաճառք»:

14) ***«Գործողության տեսակը»*** սյունակում լրացվում է «ներկայացում», «փոփոխում», «գործարքի կնքում», կամ օպերատորի կանոններով սահմանված առևտրի պայմանների խախտման արդյունքում օպերատորի կողմից հայտի հեռացման դեպքում լրացվում է «օպերատորի կողմից հեռացում», առևտրի նստաշրջանի ավարտի պահին Համակարգի կողմից հայտի հեռացման դեպքում՝ «չբավարարված», շուկայի մասնակցի (անդամի) կողմից հայտի հեռացման դեպքում՝ «մասնակցի կողմից հեռացում»:

37.2 Ձիվ 11 հաշվետվության երկրորդ աղյուսակում լրացվում են առուվաճառքի և ռեպո գործարքների հասցեական առաջարկների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հասցեական առաջարկով նախատեսվող գործարքի տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկով նախատեսվող գործարքին կամ ռեպո գործարքին օպերատորի կողմից տրված հերթական տարբերակիչ համարը:

2) ***«Հասցեական առաջարկ ներկայացրած մասնակցի (անդամի) կոդը»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկ ներկայացրած մասնակցին (անդամին) Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:

3) ***«Առևտրի մասնակցի կոդը»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից առևտրին մասնակցելու համար լիազորված այն ֆիզիկական անձի կոդը, որը շուկայի տվյալ մասնակցի անունից մասնակցում է առևտրին:

4) ***«Արժեթղթի գինը»*** սյունակում պարտատոմսերի դեպքում լրացվում է արժեթղթի գինը (ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները)՝ անվանական արժեքի 100 միավորի հաշվարկով, բաժնետոմսերի դեպքում՝ մեկ բաժնետոմսի ամբողջական գինը: Սույն սյունակը չի լրացվում ռեպո գործարքների դեպքում:

5) ***«Բավարարված ծավալը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հասցեական առաջարկի բավարարված մասի արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարը:

6) ***«Ներկայացված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հասցեական առաջարկում նշված արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հասցեական առաջարկում նշված ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը: Ընդ որում, ռեպո գործարքների հասցեական առաջարկների ներկայացման դեպքում լրացվում է ռեպո-ուղղակի գործարքի պայմանների համաձայն հաշվարկված ընդհանուր գումարը:

7) ***«Բավարարված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հասցեական առաջարկի բավարարված մասի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հասցեական առաջարկի բավարարված մասի հիման վրա հաշվարկված ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը: Ընդ որում, ռեպո գործարքների հասցեական առաջարկների ներկայացման դեպքում լրացվում է ռեպո-ուղղակի գործարքի պայմանների համաձայն հաշվարկված և ներկայացված հասցեական առաջարկի բավարարված մասի ընդհանուր գումարը:

8) ***«Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկով ներկայացված ռեպո գործարքի տարեկան տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով: Սույն սյունակը լրացվում է միայն ռեպո գործարքների հասցեական առաջարկների դեպքում:

9) ***«Հասցեական առաջարկով նախատեսված գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «արժեթղթերի առք» կամ «արժեթղթերի վաճառք»՝ կախված նրանից, թե տվյալ մասնակիցը (անդամը) հասցեական առաջարկով նախատեսված գործարքի (ռեպո գործարքի) հիմքում ընկած արժեթղթի գնորդ է, թե վաճառող:

10) ***«Գործողության տեսակը»*** սյունակում լրացվում է «ներկայացում», «փոփոխում», «փոփոխության հաստատում», «հեռացում», «գործարքի կնքում», «երկարաձգման փոփոխության հաստատում» (այն դեպքում, երբ տեղի է ունենում ժամկետի երկարաձգման հաստատում՝ անկախ այլ փոփոխությունների տեղի ունենալու հանգամանքից), «կրճատման փոփոխության հաստատում» (այն դեպքում, երբ տեղի է ունենում կրճատման հաստատում՝ անկախ այլ փոփոխությունների տեղի ունենալու հանգամանքից) կամ «մարում»:

11) ***«Ռեպո գործարքի մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի մարման ամսաթիվը օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
12) ***«Շուկայի այն մասնակցի կոդը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը»*** սյունակում լրացվում է Կենտրոնական բանկի կողմից առևտրի այն մասնակցին շնորհված կոդը, որին ուղարկվում է գործարքի (ռեպո գործարքի) կնքման հասցեական առաջարկը:»,

8) Կանոնակարգը 37.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 37.3-րդ և 37.4-րդ կետերով.

«37.3 Թիվ 11 հաշվետվության երրորդ աղյուսակում լրացվում են կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման աճուրդների մասնակիցների (անդամների)/թողարկողների կողմից ներկայացված հայտերի վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հայտի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ հայտին տրված կոդը:
2) ***«Հայտ ներկայացրած մասնակցի (անդամի)/թողարկողի կոդը»*** սյունակում լրացվում է հայտ ներկայացրած շուկայի մասնակցին կամ թողարկողին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
3) ***«Առևտրի մասնակցի կոդը»*** սյունակում նշվում է հայտ ներկայացրած շուկայի մասնակցի կամ թողարկողի կողմից աճուրդին մասնակցելու համար լիազորված այն ֆիզիկական անձի կոդը, որը շուկայի տվյալ մասնակցի կամ թողարկողի անունից մասնակցում է աճուրդին:
4) ***«Արժեթղթի գինը»*** սյունակում պարտատոմսերի դեպքում լրացվում է արժեթղթի գինը (ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները)՝ անվանական արժեքի 100 միավորի հաշվարկով, բաժնետոմսերի դեպքում՝ մեկ բաժնետոմսի ամբողջական գինը:
5) ***«Բավարարված ծավալը»*** սյունակում լրացվում է աճուրդի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերի բավարարված մասի արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարը:
6) ***«Ներկայացված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հայտի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հայտի ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը:
7) ***«Բավարարված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հայտի բավարարված մասի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հայտի բավարարված մասի հիման վրա հաշվարկված ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը:
8) ***«Հայտի տեսակը՝ կախված գնային պայմաններից»*** սյունակում նշվում է «լիմիտային» կամ «շուկայական»:
9) ***«Հայտի տեսակը՝ կախված քանակական պայմաններից»*** սյունակում նշվում է «լրիվ բավարարմամբ» կամ «մասնակի բավարարմամբ»:
10) ***«Հայտի տեսակը՝ կախված ժամանակային պայմաններից»*** սյունակում նշվում է «պահել հերթում» կամ «հանել մնացորդը»:
11) ***«Հայտի տեսակը՝ կախված ակտիվացման պայմաններից»*** սյունակում նշվում է «անմիջապես ակտիվացմամբ» կամ «ստոպ»:
12) ***«Հայտով նախատեսված գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «արժեթղթերի առք» կամ «արժեթղթերի վաճառք»:
13) ***«Գործողության տեսակը»*** սյունակում լրացվում է «ներկայացում», «փոփոխում», «գործարքի կնքում», կամ օպերատորի կանոններով սահմանված աճուրդի պայմանների խախտման արդյունքում օպերատորի կողմից հայտի հեռացման դեպքում լրացվում է «օպերատորի կողմից հեռացում», առևտրի նստաշրջանի ավարտի պահին Համակարգի կողմից հայտի հեռացման դեպքում՝ «չբավարարված», մասնակցի (անդամի) կողմից հայտի հեռացման դեպքում՝ «մասնակցի կողմից հեռացում»:

37.4 Թիվ 11 հաշվետվության չորրորդ աղյուսակում լրացվում են պետական արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման աճուրդների մասնակիցների (անդամների)/թողարկողների կողմից ներկայացված հայտերի վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հայտի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ հայտին տրված կոդը:
2) ***«Հայտ ներկայացրած մասնակցի (անդամի)/թողարկողի կոդը»*** սյունակում լրացվում է հայտ ներկայացրած մասնակցին կամ թողարկողին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
3) ***«Առևտրի մասնակցի կոդը»*** սյունակում նշվում է հայտ ներկայացրած շուկայի մասնակցի կամ թողարկողի կողմից աճուրդին մասնակցելու համար լիազորված այն ֆիզիկական անձի կոդը, որը շուկայի տվյալ մասնակցի կամ թողարկողի անունից մասնակցում է աճուրդին:

4) ***«Աճուրդի նույնացուցիչը»*** սյունակը լրացվում է համաձայն ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ բաց բաժնետիրական ընկերության՝պետական պարտատոմսերի աճուրդների կազմակերպման կանոնների:
5) ***«Զուտ գինը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի գինը՝ առանց հաշվեգրված տոկոսների՝ անվանական արժեքի 100 միավորի հաշվարկով:
6) ***«Արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է արժեթղթի գինը (ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները)՝ անվանական արժեքի 100 միավորի հաշվարկով:
7) ***«Բավարարված ծավալը»*** սյունակում լրացվում է աճուրդի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերի բավարարված մասի արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարը:
8) ***«Ներկայացված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հայտի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հայտի ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը:
9) ***«Բավարարված գումարը»*** սյունակը հաշվարկվում է որպես ներկայացված հայտի բավարարված մասի արժեթղթի գնի և արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ներկայացված հայտի բավարարված մասի հիման վրա հաշվարկված ծավալային արժեթղթերի ընդհանուր գումարը:
10) ***«Հայտի տեսակը»*** սյունակում նշվում է «լիմիտային»:
11) ***«Հայտով նախատեսված գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «արժեթղթերի առք» կամ «արժեթղթերի վաճառք»:
12) ***«Գործողության տեսակը»*** սյունակում լրացվում է «ներկայացում», «փոփոխում», «գործարքի կնքում», կամ օպերատորի կանոններով սահմանված աճուրդի պայմանների խախտման արդյունքում օպերատորի կողմից հայտի հեռացման դեպքում լրացվում է «օպերատորի կողմից հեռացում», առևտրի նստաշրջանի ավարտի պահին Համակարգի կողմից հայտի հեռացման դեպքում՝ «չբավարարված», մասնակցի (անդամի) կողմից հայտի հեռացման դեպքում՝ «մասնակցի կողմից հեռացում»:»,

9) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 14. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 15 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

45. Թիվ 15 հաշվետվության մեջ լրացվում են հաշվետու օրվա ընթացքում կազմակերպված պետական պարտատոմսերի թողարկումների կամ աճուրդների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես՝ օպերատորի կողմից պետական պարտատոմսերի գրանցման, պետական պարտատոմսերի թողարկումների և աճուրդների կազմակերպման հայտարարությունների և աճուրդների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները:

46. Թիվ 15 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակից, որոնք լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով (5 նիշի ճշտությամբ), որով արտահայտված է շուկայի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտում նշված արժեթղթերի անվանական արժեքը:

47. *Թիվ 15 հաշվետվության 1-ին աղյուսակում* լրացվում են հաշվետու օրվա ընթացքում աճուրդի համակարգում պետական պարտատոմսերի գրանցման կամ գրանցման չեղարկման վերաբերյալ տեղեկությունները: Թիվ 15 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:
2) ***«Համակարգում պարտատոմսի գրանցման կարգավիճակը»*** սյունակում նշվում է «գրանցված», պետական պարտատոմսի՝ աճուրդի համակարգում գրանցման դեպքում, կամ լրացվում է «չեղարկված», եթե պետական պարտատոմսի՝ աճուրդի համակարգում գրանցումը չեղարկվել է:
3) ***«Համակարգում պարտատոմսի գրանցման/չեղարկման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է աճուրդի համակարգում պետական պարտատոմսերի գրանցման (չեղարկման) ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):

4) ***«Թողարկման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պետական պարտատոմսերի թողարկման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025): Ընդ որում՝ թողարկման ամսաթիվը թողարկողի կողմից սահմանված օրացուցային օրն է, որից սկսած հաշվարկվում է առաջին արժեկտրոնը:
5) ***«Մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի մարման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
6) ***«Մարման գումարի վճարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի փաստացի մարման գումարի վճարման (վերջնահաշվարկի) ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
7) ***«Շրջանառության ժամկետը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի շրջանառության օրերի քանակը:
8) ***«Թողարկման ծավալը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:
9) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է պետական պարտատոմսերի անվանական արժեքը:
10) ***«Եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը, որն իրենից ներկայացնում է արժեկտրոնային պարտատոմսի համար թողարկողի կողմից սահմանված ֆիքսված տոկոսադրույք:
11) ***«Արժեկտրոնի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի վճարման պարբերականությունը (տարեկան պարբերականության դեպքում նշվում է «1», կիսամյակայինի դեպքում՝ «2», եռամսյակայինի դեպքում՝ «4», ամսականի դեպքում՝ «12», այլ դեպքերում՝ «0»):

48. *Թիվ 15 հաշվետվության 2-րդ աղյուսակում* լրացվում են հաշվետու օրվա ընթացքում պետական պարտատոմսերի թողարկումների և աճուրդների կազմակերպման հայտարարության վերաբերյալ տեղեկությունները: Թիվ 15 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:
2) ***«Աճուրդի նույնացուցիչը»*** սյունակը լրացվում է՝ համաձայն ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ բաց բաժնետիրական ընկերության՝ պետական պարտատոմսերի աճուրդների կազմակերպման կանոնների:
3) ***«Թողարկում/տեղաբաշխում/հետգնում»*** սյունակում լրացվում է «տեղաբաշխում», եթե հայտարարությունն առնչվում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի կազմակերպմանը, կամ լրացվում է «հետգնում», եթե հայտարարությունն առնչվում է պետական պարտատոմսերի հետգնման աճուրդի կազմակերպմանը, կամ «թողարկում», եթե նախատեսվում է իրականացնել պետական պարտատոմսերի թողարկում:
4) ***«Հայտարարության հրապարակման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է օպերատորի կողմից պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) աճուրդի անցկացման կամ թողարկման վերաբերյալ հայտարարության հրապարակման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
5) ***«Հայտարարության հրապարակման ժամը»*** սյունակում լրացվում է օպերատորի կողմից պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) աճուրդի անցկացման կամ թողարկման վերաբերյալ հայտարարության հրապարակման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ (13:50:55):
6) ***«Հայտարարության ստացման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) աճուրդի անցկացման կամ թողարկման վերաբերյալ թողարկողի հայտարարության՝ օպերատորի կողմից ստացման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):

7) ***«Աճուրդի մեթոդը»*** սյունակում, կախված աճուրդի իրականացման մեթոդից, լրացվում է «բազմակի գնային մեթոդ» կամ «ֆիքսված գնային մեթոդ»:
8) ***«Տեղաբաշխման աճուրդի տեսակը»*** սյունակում լրացվում է «տեղաբաշխման աճուրդ» կամ «տեղաբաշխման լրացուցիչ աճուրդ»:
9) ***«Աճուրդի հայտարարված եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է թողարկողի կողմից աճուրդի կազմակերպման հայտարարությամբ հայտարարված աճուրդի եկամտաբերությունը (առկայության դեպքում):
10) ***«Ծավալը»*** սյունակի ***«Նվազագույնը» և «Առավելագույնն»*** ենթասյունակներում լրացվում են պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման/թողարկման համապատասխանաբար նվազագույն կամ առավելագույն ծավալները (պարտատոմսերի անվանական արժեքը):
11) ***«Հայտերի ընդունման մեկնարկային ամսաթիվը» և «Հայտերի ընդունման դադարեցման ամսաթիվը»*** սյունակներում լրացվում են հայտերի ընդունման ժամանակաշրջանի համապատասխանաբար սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
12) ***«Հայտերի ընդունման մեկնարկային ժամը» և «Հայտերի ընդունման դադարեցման ժամը»*** սյունակներում լրացվում են հայտերի ընդունման ժամանակաշրջանի համապատասխանաբար սկզբի և ավարտի ժամերը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ (13:50:55):
13) ***«Թողարկման/աճուրդի իրականացման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է թողարկման կամ աճուրդի (լրացուցիչ աճուրդի) իրականացման ամսաթիվը՝օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):
14) ***«Վերջնահաշվարկի ամսաթիվը»*** սյունակում լրացվում է վերջնահաշվարկի (փաստացի իրականացման) ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (01/01/2025):

49. *Թիվ 15 հաշվետվության 3-րդ աղյուսակում* լրացվում են հաշվետու օրվա ընթացքում աճուրդի համակարգում պետական պարտատոմսերի աճուրդների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները: Թիվ 15 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.
1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:
2) ***«Աճուրդի նույնացուցիչը»*** սյունակը լրացվում է համաձայն ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ բաց բաժնետիրական ընկերության՝ պետական պարտատոմսերի աճուրդների կազմակերպման կանոնների:
3) ***«Աճուրդի կարգավիճակը»*** սյունակում լրացվում է «կայացած», «չկայացած» կամ «չեղյալ»:
4) ***«Թույլատրված հայտեր ունեցող մասնակիցների թիվը»*** սյունակում լրացվում է մասնակիցների կողմից աճուրդի համակարգ ներկայացված հայտերից օպերատորի կողմից ընդունված (թույլատրված) հայտերի թիվը:
5) ***«Բավարարված հայտեր ունեցող մասնակիցների թիվը»*** սյունակում լրացվում է աճուրդի արդյունքում բավարարված հայտեր ունեցող մասնակիցների թիվը:
6) ***«Ներկայացված հայտերի միջին կշռված եկամտաբերությունը»*** սյունակում նշվում է ներկայացված հայտերի միջին կշռված եկամտաբերությունը:
7) ***«Ներկայացված ծավալը»*** սյունակում լրացվում է աճուրդի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերում նշված պետական պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարը:
8) ***«Բավարարված ծավալը»*** սյունակում լրացվում է աճուրդի մասնակցի/թողարկողի կողմից ներկայացված հայտերի բավարարված մասի պետական պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարը:
9) ***«Աճուրդի միջին կշռված եկամտաբերությունը»*** սյունակում նշվում է կայացած աճուրդի ընթացքում կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը:
10) ***«Աճուրդի կտրման եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է պետական պարտատոմսերի այն եկամտաբերությունը, որից ավելի մեծ (փոքր) արժեք ունեցող եկամտաբերություններով աճուրդի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը չեն բավարարվում:

11) ***«Կտրման եկամտաբերությամբ ներկայացված ծավալը»*** սյունակում նշվում է այն հայտերում նշված պետական պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարը, որոնք ներկայացվել են կտրման եկամտաբերությամբ:
12) ***«Կտրման եկամտաբերությամբ բավարարված ծավալը»*** սյունակում նշվում է այն հայտերի բավարարված մասի պետական պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարը, որոնք ներկայացվել են կտրման եկամտաբերությամբ:
13) ***«Կտրման եկամտաբերությամբ բավարարված ծավալի դրույքաչափը»*** սյունակում նշվում է ներկայացված հայտերի բավարարված մասի պետական պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի տոկոսային մեծությունը ընդհանուր ներկայացված հայտերի պետական պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի մեջ (տոկոսային արտահայտությամբ):
14) ***«Ներկայացված գումարը»*** սյունակում լրացվում է աճուրդի մասնակիցների/թողարկողի կողմից ներկայացված հայտերի հիման վրա հաշվարկված հայտերում նշված պետական պարտատոմսերի ընդհանուր գումարը:
15) ***«Բավարարված գումարը»*** սյունակում լրացվում է աճուրդի մասնակիցների/թողարկողի կողմից ներկայացված հայտերի բավարարված մասի հիման վրա հաշվարկված պետական պարտատոմսերի ընդհանուր գումարը:»,

10) Կանոնակարգի Հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ` համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
11) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 11-ով` համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):
12) Կանոնակարգի Հավելված 3-ից, Հավելված 4-ից, Հավելված 5-ից, Հավելված 6-ից, Հավելված 8-ից և Հավելված 10-ից հանել «Գլխավոր հաշվապահ`» կամ «Գլխավոր հաշվապահ` ....» բառերը: *(ստորագրություն)*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի նոյեմբերի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 սեպտեմբերի 2017 թ., N 202-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 202-Ն որոշմամբ

«ՀԱՎԵԼՎԱԾ 7
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական)

Աղյուսակ 1. Արժեթղթերի առուվաճառքի հայտերի վերաբերյալ

Օպերատորի անվանումը ____________________

Հաշվետու օր ____________________

Հայտի տարբերակիչ ծածկագիրը	Հայտ ներկայացրած մասնակցի (անդամի) կոդը	Առևտրի մասնակցի կոդը	Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) հաճախորդի ծածկագիրը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժույթի ISO կոդը	Զուտ գինը	Արժեթղթի գինը	Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը	Արժեթղթերի ներկայացված քանակը	Արժեթղթերի բավարարված քանակը	Ներկայացված ծավալը	Բավարարված ծավալը	Ներկայացված գումարը	Բավարարված գումարը	Հայտի տեսակը՝ կախված գնային պայմաններից	Հայտի տեսակը՝ կախված քանակական պայմաններից	Հայտի տեսակը՝ կախված ժամանակային պայմաններից	Հայտի տեսակը՝ կախված ակտիվացման պայմաններից	Հայտով նախատեսված գործարքի տեսակը	Գործողության տեսակը	Գործողության կատարման ամսաթիվը	Գործողության կատարման ժամը

Աղյուսակ 2. Առուվաճառքի և ռեպո գործարքների հասցեական առաջարկների վերաբերյալ

Օպերատորի անվանումը ______________________________

Հաշվետու օր ____

N	Հասցեական առաջարկով նախատեսվող գործարքի տարբերակիչ համարը	Հասցեական առաջարկ ներկայացրած մասնակցի (անդամի) կոդը	Առևտրի մասնակցի կոդը	Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) հաճախորդի ծածկագիրը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժույթի ISO կոդը	Արժեթղթի գինը	Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը	Արժեթղթերի ներկայացված քանակը	Արժեթղթերի բավարարված քանակը	Ներկայացված ծավալը	Բավարարված ծավալը	Ներկայացված գումարը	Բավարարված գումարը	Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)	Հասցեական առաջարկով նախատեսված գործարքի տեսակը	Գործողության տեսակը	Գործողության կատարման ամսաթիվը	Գործողության կատարման ժամը	Ռեպո գործարքի մարման ամսաթիվը	Շուկայի այն մասնակցի՝ կոդը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար՝ _________________________

(ստորագրություն)

Այլուսակ 3. Կորպորատիվ արժեթղթերի աճուրդների հայտերի վերաբերյալ

Օպերատորի անվանումը ______________________________

Հաշվետու օր ____

Հայտի տարբերակիչ ծածկագիրը	Հայտ ներկայացրած մասնակցի (անդամի)/թողարկողի կոդը	Առևտրի մասնակցի կոդը	Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) հաճախորդի ծածկագիրը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժույթի ISO կոդը	Արժեթղթի գինը	Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը	Արժեթղթերի ներկայացված քանակը	Արժեթղթերի բավարարված քանակը	Ներկայացված ծավալը	Բավարարված ծավալը	Ներկայացված գումարը	Բավարարված գումարը	Հայտի տեսակը՝ կախված գնային պայմաններից	Հայտի տեսակը՝ կախված քանակական պայմաններից	Հայտի տեսակը՝ կախված ժամանակային պայմաններից	Հայտի տեսակը՝ կախված ակտիվացման պայմաններից	Հայտով նախատեսված գործարքի տեսակը	Գործողության տեսակը	Գործողության կատարման ամսաթիվը	Գործողության կատարման ժամը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար՝ ________________________

(ստորագրություն)

Աղյուսակ 4. Պետական արժեթղթերի աճուրդների հայտերի վերաբերյալ

Օպերատորի անվանումը ______________________________

Հաշվետու օր ____

Հայտի տարբերակիչ ծածկագիրը	Հայտ ներկայացրած մասնակցի (անդամի)/թողարկողի կոդը	Առևտրի մասնակցի կոդը	Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) հաճախորդի ծածկագիրը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Աճուրդի նույնացուցիչը	Արժեթղթի դասը	Զուտ գինը	Արժեթղթի գինը	Արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը	Ներկայացված ծավալը	Բավարարված ծավալը	Ներկայացված գումարը	Բավարարված գումարը	Հայտի տեսակը	Հայտով նախատեսված գործարքի տեսակը	Գործողության տեսակը	Գործողության կատարման ամսաթիվը	Գործողության կատարման ժամը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար՝ ________________________

(ստորագրություն)

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 202-Ն որոշմամբ

«ՀԱՎԵԼՎԱԾ 11
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(յուրաքանչյուր փոփոխության դեպքում)

Աղյուսակ 1. Օպերատորի կողմից պետական պարտատոմսերի գրանցման վերաբերյալ

Օպերատորի անվանումը ______________________________

Հաշվետու օր ____

Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Հաշվապահական հաշվառման դասակարգումը ձեռքբերման պահին	Հաշվապահական հաշվառման դասակարգումը հաշվետու/վերադասակարգման ամսաթվին	Թողարկման ամսաթիվը	Մարման ամսաթիվը	Մարման ենթակա կտրոնի վճարման ամսաթիվը	Շրջանառության ժամկետը	Թողարկման ծավալը	Արժույթի ISO կոդը	Եկամտաբերությունը	Արժեկտրոնի վճարման պարբերականությունը

Աղյուսակ 2. Պետական պարտատոմսերի թողարկումների և աճուրդների կազմակերպման հայտարարության

Օպերատորի անվանումը ______________________________

Հաշվետու օր ____

Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Աճուրդի նույնացուցիչը	Թողարկում/տեղաբաշխում/հետգնում	Հայտարարության հրապարակման ամսաթիվը	Հայտարարության հրապարակման ժամը	Հայտարարության ստացման ամսաթիվը	Աճուրդի մեթոդը	Տեղաբաշխման աճուրդի տեսակը	Աճուրդի հայտարարված եկամտաբերությունը	Ծավալը		Հայտերի ընդունման մեկնարկային ամսաթիվը	Հայտերի ընդունման մեկնարկային ժամը	Հայտերի ընդունման դադարեցման ամսաթիվը	Հայտերի ընդունման դադարեցման ժամը	Թողարկման/աճուրդի իրականացման ամսաթիվը	Վերջնահաշվարկի ամսաթիվը
									Նվազագույն	Առավելագույն						

Աղյուսակ 3. Պետական պարտատոմսերի աճուրդների արդյունքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը ______________________________

Հաշվետու օր ____

Արժեքղթի տարբերակիչ ծածկագիրը	Աճուրդի նույնացուցիչը	Աճուրդի կարգավիճակը	Հայտ ներկայացրած մասնակիցների թիվը	Թույլատրված հայտեր ունեցող մասնակիցների թիվը	Բավարարված հայտեր ունեցող մասնակիցների թիվը	Ներկայացված հայտերի նվազագույն եկամտաբերությունը	Ներկայացված հայտերի առավելագույն եկամտաբերությունը	Ներկայացված հայտերի միջին կշռված եկամտաբերությունը	Ներկայացված ծավալը	Բավարարված ծավալը	Աճուրդի միջին կշռված եկամտաբերությունը	Աճուրդի կտրման եկամտաբերությունը	Կտրման եկամտաբերությամբ ներկայացված ծավալը	Կտրման եկամտաբերությամբ բավարարված ծավալը	Կտրման եկամտաբերությամբ բավարարված ծավալի դրույքաչափը	Ներկայացված գումարը	Բավարարված գումարը

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական պահառուի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորի գործառույթի ստանձնումը,

նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար ապահովել վերահսկողական, վիճակագրական և վերլուծական նպատակներով անհրաժեշտ տեղեկությունների ստացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 182-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերը և 207-րդ հոդվածի 1-ին կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները կանոնակարգ 5/04-ը հաստատելու մասին թիվ 357-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետում.

ա. 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-րդ ենթակետ.

«4.1) ***«Հաշվետու շաբաթ»***՝ երկուշաբթի օրվանից մինչև կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջան: Կենտրոնական դեպոզիտարիայի համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու շաբաթ է համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիա ստանալու օրվանից մինչև տվյալ շաբաթվա կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջանը:»,

բ. 6-րդ ենթակետը «հաշվետու օր,» բառերից հետո լրացնել «հաշվետու շաբաթ,» բառերով,

2) Կանոնակարգի 5-րդ կետի աղյուսակի 13-րդ տողում «ամսական» բառը փոխարինել «շաբաթական» բառով,

3) Կանոնակարգը 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-րդ կետով.

«10.1. Շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ներառյալ:»,

4) Կանոնակարգի 27-րդ կետի 9-րդ և 14-րդ ենթակետերը համապատասխանաբար շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) Առաքման կամ ստացման ենթակա արժեթղթերի քանակը» սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի վերջում արժեթղթերի քանակի և ընթացիկ ապադեպոնացված արժեթղթերի քանակի հանրագումարի ու առաջին փուլով դեպոնացված արժեթղթերի քանակի և ընթացիկ դեպոնացված արժեթղթերի քանակի հանրագումարի տարբերությունը՝ հատերով:

14) «Վճարման կամ ստացման ենթակա դրամական միջոցները» սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի վերջում առկա դրամական միջոցների և ընթացիկ ապադեպոնացված դրամական միջոցների հանրագումարի ու առաջին փուլով դեպոնացված դրամական միջոցների և ընթացիկ դեպոնացված դրամական միջոցների հանրագումարի տարբերությունը:»,

5) Կանոնակարգի 29-րդ կետում.

ա. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ***«Արժեթղթերի փոխանցման հիմքը»*** սյունակում լրացվում է «առուվաճառք»՝ առուվաճառքի գործարքների արդյունքում փոխանցման, այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական պահառուի կողմից պետական պարտատոմսերի ուղղակի վաճառքի (տեղաբաշխման)

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 09.10. 2017 թ. (ՀՀԳՏ N29 (598)[1], 20.10.2017):

դեպքում, «ռեպո գործարքի կնքում» կամ «ռեպո գործարքի մարում»՝ ռեպո և հակադարձ ռեպո գործարքների արդյունքում արժեթղթերի փոխանցման դեպքում, «հետգնում»՝ թողարկողի կողմից արժեթղթերի հետգնման դեպքում, կամ «այլ»՝ այլ դեպքերում (օրինակ, նվիրատվության, ժառանգության արդյունքում, պարտավորության դիմաց և այլ հիմքերով արժեթղթերի փոխանցման դեպքում):»,

բ. 10-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-րդ ենթակետ.

«10.1) ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը (հայտնի լինելու դեպքում)»*** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պարտատոմսերի դեպքում լրացվում է վերջինիս կողմից Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը (հետգնման դեպքում՝ անվանական եկամտաբերությունը): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:»,

գ) 11-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ ենթակետ.

«11.1) ***«Գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը»*** սյունակում լրացվում է կնքված գործարքի վերջնահաշվարկի կատարման ամսաթիվը:»,

6) Կանոնակարգի 38-րդ կետը 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-րդ ենթակետով.

«6.1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

7) Կանոնակարգի Հավելված 3-ում՝

ա. «Արժեթղթերի քանակը» սյունակից հետո լրացնել «Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը (հայտնի լինելու դեպքում)» վերնագրով նոր սյունակ,

բ. «Ընդհանուր գումարը» սյունակներից հետո լրացնել «Գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում)» և «Գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը» վերնագրերով նոր սյունակներ,

8) Կանոնակարգի Հավելված 8-ը «Արժեթղթի թողարկման երկիրը» սյունակից հետո լրացնել «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» վերնագրով նոր սյունակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 սեպտեմբերի 2017 թ., N 203-Ն

*«Ածանցյալ ֆինանսական գործարքների գրանցման կարգն ու ժամկետները, գրանցամատյանի վարման, տեղեկությունների ներկայացման, պահպանման, տրամադրման կարգն ու պայմանները» կանոնակարգ 4/20-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյանի արդյունավետ գործունեության ապահովման միջոցով բարձրացնել ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունը, այդ թվում՝ հարկային մարմնի համար,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3.1-ին հոդվածի 4-րդ մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ածանցյալ ֆինանսական գործարքների գրանցման կարգն ու ժամկետները, գրանցամատյանի վարման, տեղեկությունների ներկայացման, պահպանման, տրամադրման կարգը և պայմանները» կանոնակարգ 4/20-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 սեպտեմբերի 2017 թ., N 204-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 204-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/20

«ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են.

1) Ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյանի վարման, այդ թվում՝ ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունների գրանցման, դրանց պահպանման կարգն ու պայմանները,
2) Ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունների՝ Առևտրի գրանցամատյան ներկայացման կարգն ու պայմանները,
3) Գործարքի կողմերին, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց (հաճախորդների հաշվին կնքված ածանցյալ ֆինանսական գործարքների դեպքում) ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման կարգն ու պայմանները:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 09.10. 2017 թ. (ՀՀԳՏ N29 (598)[1], 20.10.2017):

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Առևտրի գրանցամատյան»*** ածանցյալ ֆինանսական գործարքների և դրանց կողմերի վերաբերյալ տեղեկություններ ներառող ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյան:

2) ***«Հաշվետու անձ»***՝ ֆիզիկական անձ չհանդիսացող (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) անձինք, որոնք Առևտրի գրանցամատյանում գրանցման նպատակով ներկայացնում են ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հաշվետվություններ:

3) ***«Ամսաթիվ»***՝ օրը, ամիսն ու տարեթիվը (01/01/2025թ.):

4) ***«Ռեզիդենտ»/ոչ ռեզիդենտ»***՝ ըստ սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված մեթոդաբանության:

5) ***«Ֆորվարդ գործարք կամ ֆորվարդ»***՝ կարգավորվող շուկայից դուրս կնքվող համաձայնություն ակտիվի (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես *սահմանված գնով և չստանդարտացված պայմաններով, որի դեպքում կողմերը ստանձնում են գործարքի* վերջնահաշվարկի իրականացման պարտավորություն: Կախված ֆորվարդի (ֆորվարդ գործարքի) հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆորվարդը (ֆորվարդ գործարքը) համարվում է արժութային ֆորվարդ, արժեթղթերով ֆորվարդ կամ այլ ակտիվներով ֆորվարդ:

6) ***«Ֆյուչերս գործարք կամ ֆյուչերս»***՝ կարգավորվող շուկայում կնքվող համաձայնություն ակտիվի (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և այլ ստանդարտացված պայմաններով, որի դեպքում կողմերը ստանձնում են գործարքի վերջնահաշվարկի իրականացման պարտավորություն: Կախված ֆյուչերսի (ֆյուչերս գործարքի) հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆյուչերսը (ֆյուչերս գործարքը) համարվում է արժութային ֆյուչերս, արժեթղթերով ֆյուչերս կամ այլ ակտիվներով ֆյուչերս:

7) ***«Օպցիոն գործարք կամ օպցիոն»***՝ համաձայնություն, որով մի կողմը (օպցիոնի գնորդը) իրավունք է ձեռք բերում վաճառել (գնել) որոշակի բազիսային ակտիվ (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) պայմանագրում նշված ժամկետում և գնով, իսկ մյուս կողմը (օպցիոնի վաճառող) պարտավորություն է ստանձնում գնել (վաճառել) այդ ակտիվը (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ): Կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ օպցիոնը համարվում է արժութային օպցիոն, արժեթղթերով օպցիոն կամ այլ ակտիվներով օպցիոն:

8) ***«Սվոփ գործարք կամ սվոփ»***՝

ա. ***Արժութային սվոփ***՝ համաձայնություն, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք), ինչպես նաև *պայմանագրով նախապես սահմանված* տոկոսագումարներ փոխանակելու պայմանով: Սվոփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքը լողացող տոկոսադրույքի հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքները:

բ. ***Փոխարժեքային սվոփը*** արժութային սվոփի պարզ տեսակ է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք) պայմանով:

գ. ***Տոկոսադրույքային սվոփը*** համաձայնություն է, որը նախատեսում է տոկոսային վճարումների տեսքով դրամական հոսքերի փոխանակում: Տոկոսադրույքային սվոփի պարագայում հիմքում ընկած դրամական միջոցները չեն փոխանակվում, այլ փոխանակվում են միայն այդ դրամական միջոցների նկատմամբ հաշվարկված տոկոսային վճարումները: Սվոփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները լողացող տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքներով հաշվարկված տոկոսագումարները:

9) ***«Պետական արժեթղթեր»***՝ Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված արժեթղթեր:

10) ***«Հաշվանց»***՝ վերջնահաշվարկի բնույթ, որի դեպքում ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկի օրը կողմերի միջև կատարվող պարտավորությունները պետք է հաշվանցվեն՝ կողմերի միջև փոխանցելով մի գումար՝ առանց մատակարարելու գործարքի հիմքում ընկած ակտիվները,

11) ***«Զուտացում»***՝ համաձայն «Սնանկության մասին» կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Առևտրի գրանցամատյանը վարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ).
1) սույն կանոնակարգով ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ ստացված տեղեկությունները (հաշվետվությունները) պատշաճ ընդունում և գրանցում է Առևտրի գրանցամատյանում,
2) սույն կետի 1-ին ենթակետով ստացված տեղեկությունները պահպանում է տվյալ գործարքի վերջնահաշվարկից (այլ պատճառներով գործարքի դադարումից) հետո առնվազն 10 տարի,
3) Առևտրի գրանցամատյանի տեղեկությունները տրամադրում է օրենքով և կանոնակարգերով Առևտրի գրանցամատյանի տեղեկությունները ստանալու իրավասություն ունեցող անձանց:

ԳԼՈՒԽ 4. ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՆ ՀԱՇՎԵՏՈՒ ԱՆՁԻՆՔ

5. Հաշվետու անձինք, որոնք կնքում են հաշվանցով և (կամ) զուտացմամբ ածանցյալ ֆինանսական գործարքներ և միաժամանակ նպատակ ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված շահութահարկի հարկման բազայի նվազեցումներից, գրանցման նպատակով Առևտրի գրանցամատյան են ներկայացնում ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներառող հաշվետվություն: Ընդ որում՝ տվյալ հաշվետվությունը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի 6-րդ գլխի, բացառությամբ սույն կանոնակարգի 8-րդ կետի:
6. Սույն գլխով սահմանված հաշվետվությունները Առևտրի գրանցամատյան ներկայացնող հաշվետու անձինք են համարվում.
1) եթե գործարքի կողմերը միմյանց հայտնի են, և նրանք չեն հանդիսանում ներդրումային ընկերություն, բանկ կամ ապահովագրական ընկերություն, ապա տվյալ գործարքի համար հաշվետու անձ է համարվում գործարքի կողմերից միայն մեկը՝ գործարքի կողմերի նախապես գրավոր համաձայնության հիման վրա:
2) եթե ածանցյալ ֆինանսական գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ, ապա տվյալ գործարքի համար հաշվետու անձ է համարվում տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձը,
3) եթե ածանցյալ ֆինանսական գործարքի կողմերից միայն մեկը ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն կամ բանկ է, ապա տվյալ գործարքի համար հաշվետու անձ է համարվում համապատասխանաբար տվյալ ապահովագրական ընկերությունը, ներդրումային ընկերությունը կամ բանկը:
4) եթե ածանցյալ ֆինանսական գործարքը կնքվել է ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների և (կամ) բանկերի միջև, ապա տվյալ գործարքի համար հաշվետու անձ են համարվում գործարքի երկու կողմն էլ:
7. Սույն կանոնակարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում սույն գլխով սահմանված հաշվետվությունները հաշվետու անձի փոխարեն կարող են ներկայացվել երրորդ անձի կողմից:
8. Ներդրումային ծառայություններ չմատուցող բանկերը, ապահովագրական ընկերությունները, ինչպես նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձինք համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ով, Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ով ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու իրենց պարտավորությունը կատարելու դեպքում համարվում են Առևտրի գրանցամատյան ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացրած, եթե գործարքի կողմերը տվյալ հաշվետվությամբ սահմանված կարգով տվել են իրենց համաձայնությունը տվյալ գործարքների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու հարկային մարմնին:

ԳԼՈՒԽ 5. ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Բացառությամբ սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված ֆինանսական կազմակերպությունների, Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող այլ սուբյեկտները սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվությունը ներկայացնում են Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված կարգով իրենց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգով:
10. Սույն կանոնակարգի 8-րդ և 9-րդ կետերով չնշված այլ հաշվետու անձինք սույն գլխով սահմանված հաշվետվությունը ներկայացնում են էլեկտրոնային փոստով՝ «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հավատարմագրված հավաստագրման կենտրոնի կողմից թողարկված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Առևտրի գրանցամատյանը հաշվետվության ստացման դեպքում հաշվետու անձին է ուղարկում ստացումը հավաստող պատասխան նամակ:
11. Հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր, որում ներառվում են տվյալ օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ը (հաշվետու օր) կնքված ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները (եթե հաշվետու անձը տվյալ հաշվետու օրվա ընթացքում կնքել է ածանցյալ ֆինանսական գործարքներ): Ընդ որում՝ Սի-Բի-Էյ-Նեթ համակարգով և ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով օրական հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև ժամը 17:00-ը, իսկ համակարգի խափանման դեպքում ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով մինչև հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:30-ը: Հաշվետվությունը (բացառությամբ 13-րդ և 14-րդ աղյուսակների) ներկայացվում է նաև ամսական կտրվածքով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ), որտեղ արտացոլվում են Առևտրի գրանցամատյան ներկայացված և հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ վերջնահաշվարկ չկատարված ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում՝ այն դեպքերում, երբ նույն օրվա ընթացքում հաշվետու անձը ներկայացնում է և՛ օրական հաշվետվություն, և՛ ամսական հաշվետվություն, ապա այդ օրերի համար օրական և ամսական հաշվետվությունները ներկայացվում են առանձին ֆայլերով:
12. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող, սույն կանոնակարգով սահմանված ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի համաձայն: Առևտրի գրանցամատյանի կողմից հաշվետվության տվյալների սխալների բացահայտման դեպքում Առևտրի գրանցամատյանը պահանջում է հաշվետվության ճշգրտում, ընդ որում՝ հաշվետվության ճշգրտման վերաբերյալ գրությունն ուղարկվում է այն հասցեով, որով Առևտրի գրանցամատյան է ներկայացվել տվյալ ածանցյալ ֆինանսական գործարքի վերաբերյալ հաշվետվությունը: Այս դեպքում, եթե հաշվետու անձը հաշվետվության ճշգրտումը չի ներկայացնում Առևտրի գրանցամատյանի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, ապա հաշվետվությունը համարվում է Գրանցամատյան չներկայացված, իսկ տվյալ գործարքի վերաբերյալ բոլոր տեղեկությունները հանվում են Առևտրի գրանցամատյանում գրանցումից, և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» սահմանված շահութահարկի մասով սահմանված նվազեցումների իրականացման հնարավորությունը տվյալ գործարքի համար դառնում է ոչ կիրառելի: Ընդ որում, միևնույն հաշվետու օրվա համար մի քանի ճշգրտված հաշվետվությունների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված հաշվետվությունը:
13. Այն դեպքերում, երբ հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը հաշվետու անձի համար աշխատանքային է, իսկ Առևտրի գրանցամատյանի համար՝ ոչ աշխատանքային, ապա հաշվետվության ներկայացման վերջին օր է համարվում Առևտրի գրանցամատյանի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ընդ որում՝ այս դեպքում օրական հաշվետվություններ ներկայացնելիս հաշվետու անձի համար աշխատանքային համարվող հաշվետու օրերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Առևտրի գրանցամատյանի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա հաշվետվության մեջ:
14. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, չպետք է լրացվի «յունիկոդ»-ով, երկու լրացված տողերի միջև ամբողջությամբ դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի տարածվում հաշվետու սուբյեկտի վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Առևտրի գրանցամատյանի կողմից տրամադրված ֆայլերում:

15. Հաշվետվությունները լրացնելիս ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների անունները, վերջիններիս վերաբերող այլ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան): Բացառություն են կազմում բանկերի Սվիֆտ կոդերը, Տելեքս համարները, արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերը, արժույթի ISO և այլ կոդերը:

ԳԼՈՒԽ 6. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ

16. Սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվությունները ներկայացվում են սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված կարգով, ընդ որում՝ հաշվետվություններում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում կնքված ածանցյալ ֆինանսական գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից):
17. Սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվության իմաստով ածանցյալ ֆինանսական գործարքի կնքում է համարվում անձի կողմից ածանցյալ ֆինանսական գործարքի պայմանագրի կնքումը ֆոնդային բորսայում, այլ կարգավորվող շուկայում կամ չկարգավորվող շուկայում:
18. Սույն կանոնակարգի 16-րդ կետի իմաստով փոփոխված գործարքներ են համարվում սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված հաշվետվության 1-ից 12-րդ աղյուսակներում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները (պայմանների փոփոխություն, գործարքի ժամկետի երկարաձգում, կրճատում և այլն): Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս աղյուսակներում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել: Ընդ որում, գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն), որով կնքվել են համապատասխան գործարքները:
19. Սույն գլխով սահմանված հաշվետվությունը չի ներկայացվում մարման գործարքների համար:
20. Սույն գլխով սահմանված հաշվետվությունում լրացման ենթակա բոլոր թվերը կլորացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:
21. Սույն գլխով սահմանված հաշվետվությունը բաղկացած է 14 աղյուսակներից, որոնք լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու անձը»*** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»:
2) ***«Անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)»*** սյունակում լրացվում է հաշվետու անձի ֆիրմային անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը):
3) ***«ՀՎՀՀ»*** սյունակում լրացվում է հաշվետու անձի հաշվառման համարը:
4) ***«Գործարքի նույնականացուցիչ համարը»*** սյունակում նշվում է հաշվետու անձի կողմից տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:
5) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված», «չեղարկված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից՝ այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից՝ այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», կնքված գործարքի վերջնահաշվարկի կատարումը չեղարկելու դեպքում՝ «չեղարկված», իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ»:
6) ***«Գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:
7) ***«Փոփոխված գործարքի ամսաթիվը»*** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:
8) ***«Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

9) ***«Գործարքի վերջնահաշվարկի բնույթը»*** սյունակում լրացվում է.
   ա. «հաշվանց», եթե ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկի օրը կողմերի միջև կատարվող պարտավորությունները իրականացվելու են հաշվանցով,
   բ. «զուտացում», եթե կողմերը իրավունք ունեն ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկն իրականացնել զուտացմամբ,
   գ. «հաշվանց և զուտացում», եթե սույն ենթակետի «ա» և «բ» պարբերությունները միաժամանակ կիրառելի են, կամ
   դ. «կողմերի հայեցողությամբ», եթե գործարքի պայմանագրով երկու կողմերը համաձայնվել են գործարքի վերջնահաշվարկի օրը առաքել ակտիվները կամ կատարել պարտավորությունների հաշվանց, կամ
   ե. «կողմերի հայեցողությամբ և զուտացում» եթե սույն ենթակետի «բ» և «դ» պարբերությունները միաժամանակ կիրառելի են:
10) ***«Գործարքի մյուս կողմը»*** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» նշումը: Այն դեպքում, երբ գործարքի մյուս կողմը հայտնի չէ, մասնավորապես՝ կազմակերպված շուկաներում կնքված գործարքների դեպքում, սույն սյունակում լրացվում է «կազմակերպված շուկա» (բացառությամբ այս շուկաներում կնքված հասցեական գործարքների):
11) ***«Գործարքի մյուս կողմի անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)»*** սյունակում գործարքի մյուս կողմի հայտնի լինելու դեպքում լրացվում է գործարքի մյուս կողմի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը):
12) ***«Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)»*** սյունակում գործարքի մյուս կողմի հայտնի լինելու դեպքում լրացվում է գործարքի մյուս կողմի հարկ վճարողի հաշվառման համարը (ֆիզիկական անձի դեպքում՝ ՀԾՀ-ն, իսկ ՀԾՀ-ի բացակայության դեպքում՝ անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը):
13) ***«Գործարքի մյուս կողմի երկիրը»*** սյունակում գործարքի մյուս կողմի հայտնի լինելու դեպքում լրացվում է գործարքի մյուս կողմի ռեզիդենտության երկրի ISO կոդը:
14) ***«Միջնորդը»*** սյունակը լրացման է ենթակա միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:
15) ***«Վճարված/ստացված նախնական գումարը»*** սյունակում լրացվում է այն գումարը, որը հաշվետու անձի կողմից վճարվել/ստացվել է նախապես՝ ածանցյալ ֆինանսական գործարքի կնքման պահին:
16) ***«Գրավի առկայությունը»*** սյունակում լրացվում է «առանց գրավի», «մասնակի գրավով», «ամբողջական գրավով», եթե ածանցյալ ֆինանսական գործարքով ստանձնած պարտավորությունների կատարման համար համապատասխանաբար բացակայում է գրավը, առկա է մասնակի գրավ կամ ամբողջական գրավ:
17) ***«Գրավի արժեքը»*** սյունակում լրացվում է գրավի արժեքը (կողմերի կողմից համաձայնեցված արժեք) այն արժույթով, որով արտահայտված է վերջինս: Եթե գործարքի հիմքում ընկած գրավը դրամական միջոցներից տարբեր այնպիսի ակտիվ է հանդիսանում, որը չի գնանշվում որևէ արժույթով, ապա տվյալ գրավի արժեքն անհրաժեշտ է արտացոլել Հայաստանի Հանրապետության դրամով:
18) ***«Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը»*** սյունակում լրացվում է «համաձայն եմ»: Ընդ որում՝ այս համաձայնությունը ենթադրում է, որ հաշվետու անձը և գործարքի մյուս կողմը (հայտնի լինելու դեպքում) տվել են իրենց համաձայնությունը՝ հաշվետվության տվյալ տողում լրացված տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու վերաբերյալ:
19) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է գործարքի կնքման ժամը միայն կարգավորվող շուկայում կնքված գործարքների համար: Օտարերկրյա կարգավորվող շուկաներում գործարքների կնքման դեպքում գործարքի կնքման ժամը նշվում է տեղի (Հայաստանի Հանրապետության) ժամանակով (հայտնի լինելու դեպքում): Ընդ որում, գործարքի կնքման ժամը նշվում է հետևյալ կերպ. ժամ:րոպե:վայրկյան (13:50:55):
20) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած արժեթղթի դասը, մասնավորապես՝ սույն սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետում նշված սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե՝ ոչ:

21) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում` Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

22) ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած արժեթղթի թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում` անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է` անկախ այն հանգամանքից` արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե` ոչ:

23) ***«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

24) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում նշվում է ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած մեկ արժեթղթի ձեռքբերման կամ վաճառքի (իրականացման) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

25) ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է ածանցյալ ֆինանսական գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի ISO կոդը:

26) ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»*** սյունակում ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում` գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը` հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում` գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ` հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:

27) ***«Գործարքի կնքման վայրը»*** սյունակը լրացվում է հետևյալ կերպ. եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկայում` ապա նշվում է տվյալ օպերատորի լրիվ ֆիրմային անվանումը, եթե գործարքը կնքվել է կարգավորվող շուկայից դուրս` ապա նշվում է «չկարգավորվող շուկա»:

28) ***«Գործիքի վերագնահատված արժեքը»*** սյունակը լրացման է ենթակա միայն ամսական հաշվետվությունների դեպքում, որտեղ լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի վերագնահատված արժեքը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ:

29) ***«Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը»*** սյունակը լրացման է ենթակա միայն ամսական հաշվետվությունների դեպքում, որտեղ լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը:

22. Ի լրումն սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված լրացման կանոնների` սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի լրացման համար պետք է պահպանվեն նաև սույն կանոնակարգի 23-ից 42-րդ կետերով սահմանված լրացման լրացուցիչ կանոնները:

23. *Հաշվետվության 1-ին աղյուսակում* լրացվում են հաշվետու անձի կողմից կնքված արժութային ֆորվարդ գործարքների (այդ թվում` փոխիխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

24. Սույն հաշվետվության 1-ին աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.
1) ***«Գործարքի տեսակը (Ֆորվարդ առք/Ֆորվարդ վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու անձի տեսանկյունից ֆորվարդի հիմքում ընկած արժույթը կամ սակարկվող արժույթը (այսուհետ՝ ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է:
2) ***«Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ISO կոդը»*** սյունակում նշվում է ֆորվարդ գործարքի հիմքում ընկած արժույթի ISO կոդը:
3) ***«Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը»*** սյունակում նշվում է ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը այն արժույթով, որով արտահայտված է տվյալ գումարը:
4) ***«Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը»*** սյունակում լրացվում է հաշվետու անձի տեսանկյունից ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթի կամ սակարկվող արժույթի (այսուհետ՝ ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթ) ISO կոդը:
25. Սույն կանոնակարգի համաձայն՝ ֆորվարդի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքով.
1) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը հայկական դրամ է, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արժույթը, որի դիմաց տրամադրվում է հայկական դրամը,
2) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը ԱՄՆ դոլար է, իսկ մյուսը՝ հայկական դրամից տարբեր արտարժույթ, ապա ԱՄՆ դոլարն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթը,
3) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը եվրո է, իսկ մյուսը՝ հայկական դրամից և ԱՄՆ դոլարից տարբեր արտարժույթ, ապա եվրոն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթը,
4) եթե ֆորվարդով փոխանակվում են հայկական դրամից, ԱՄՆ դոլարից, եվրոյից տարբեր արժույթներ, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արտարժույթը, որի՝ ֆորվարդ պայմանագրով համաձայնեցված ծավալի հարաբերությունը մյուս արտարժույթի՝ ֆորվարդով համաձայնեցված ծավալին ստացվում է 1-ից մեծ:

Ենթադրենք՝ հաշվետու անձը ֆորվարդ պայմանագրի համաձայն պայմանագրում նշված ժամկետում պետք է տրամադրի հակառակ կողմին որոշակի ծավալով ԱՄՆ դոլար՝ հակառակ կողմից ստանալով որոշակի ծավալի հայկական դրամ, ապա այս դեպքում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում ԱՄՆ դոլարը, իսկ հայկական դրամը համապատասխանաբար՝ ստացվելիք արժույթ և հաշվետվության 8-րդ՝ (Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը) սյունակում նշվում է «AMD»:

26. *Հաշվետվության 2-րդ աղյուսակում* լրացվում են անձանց կողմից կնքված արժութային ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:
27. Հաշվետվության 2-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.
1) ***«Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆյուչերս առք» կամ «ֆյուչերս վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու անձի տեսանկյունից ֆյուչերսի հիմքում ընկած արժույթը կամ սակարկվող արժույթը (այսուհետ՝ ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է:
2) ***«Ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ISO կոդը»*** սյունակում նշվում է ֆյուչերս գործիքի հիմքում ընկած արժույթի ISO կոդը:
3) ***«Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը»*** սյունակում նշվում է մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը այն արժույթով, որով արտահայտված է տվյալ գումարը:
4) ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի առարկա բոլոր ֆյուչերսների հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը այն արժույթով, որով արտահայտված է տվյալ գումարը:
5) ***«Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը»*** սյունակում լրացվում է հաշվետու անձի տեսանկյունից ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթի կամ սակարկվող արժույթի (այսուհետ՝ ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթ) ISO կոդը:

Ֆյուչերսի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել 25-րդ կետում սահմանված սկզբունքով:

28. *Հաշվետվության 3-րդ աղյուսակում* լրացվում են հաշվետու անձանց կողմից կնքված արժեթղթերով ֆորվարդ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

29. Հաշվետվության 3-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (Ֆորվարդ առք/Ֆորվարդ վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու անձի տեսանկյունից ֆորվարդի հիմքում ընկած արժեթուղթը գնվում, թե վաճառվում է:

2) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը, ընդ որում, ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

3) ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես ֆորվարդի հիմքում ընկած միավոր արժեթղթի գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

30. *Հաշվետվության 4-րդ աղյուսակում* լրացվում են հաշվետու անձանց կողմից կնքված արժեթղթերով ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

31. Հաշվետվության 4-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆյուչերս առք» կամ «ֆյուչերս վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու անձի տեսանկյունից ֆյուչերսի հիմքում ընկած արժեթուղթը գնվում, թե վաճառվում է:

2) ***«Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է մեկ ֆյուչերսի հիմքում ընկած գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

3) ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես ֆյուչերսի հիմքում ընկած միավոր արժեթղթի գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

32. *Հաշվետվության 5-րդ և 6-րդ աղյուսակներում* լրացվում են հաշվետու անձանց կողմից այլ ակտիվներով (բացառությամբ արժույթի և արժեթղթերի) կնքված ֆորվարդ և ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները: Հաշվետվության 5-րդ և 6-րդ աղյուսակները լրացվում են համապատասխանաբար սույն կանոնակարգի 29-րդ և 31-րդ կետերով սահմանված արժեթղթերով ֆորվարդների և արժեթղթերով ֆյուչերսների լրացման հրահանգին համապատասխան: Ընդ որում՝ ***«ֆորվարդի հիմքում ընկած ակտիվը»*** *կամ* ***«ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվը»*** սյունակներում լրացվում է դրանց հիմքում ընկած ցանկացած ակտիվի անվանումը:

33. *Հաշվետվության 7-րդ, 8-րդ և 9-րդ աղյուսակներում* լրացվում են հաշվետու անձանց կողմից կնքված արժութային, արժեթղթերով և այլ ակտիվներով (բացառությամբ արժույթի, արժեթղթերի) օպցիոն գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) առքի և վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկությունները□

34. Հաշվետվության 7-րդ, 8-րդ և 9-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)»*** սյունակում լրացվում է «օպցիոն առք» կամ «օպցիոն վաճառք»՝ կախված, թե հաշվետու անձի տեսանկյունից օպցիոնի առք է, թե վաճառք: Հաշվետու անձի տեսանկյունից օպցիոնի առք է համարվում իրավունքի ձեռքբերումը գնել (վաճառել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, որի դիմաց հաշվետու անձը հակառակ կողմին (որը ստանձնում է պարտավորություն վաճառել (գնել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը) վճարում է պարգևավճար: Օպցիոնի վաճառք է համարվում պարտավորության ստանձնումը գնել (վաճառել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, որի դիմաց հակառակ կողմը (որը ձեռք է բերում իրավունք վաճառել (գնել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը) հաշվետու անձին վճարում է պարգևավճար:

2) ***«Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)»*** սյունակում լրացվում է «գնման օպցիոն» կամ «վաճառքի օպցիոն»: Գնման օպցիոնի առք նշանակում է, որ գնման օպցիոնի գնորդը իրավունք է ձեռք բերում գնել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Գնման օպցիոնի վաճառք նշանակում է, որ գնման օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Վաճառքի օպցիոնի առք նշանակում է, որ վաճառքի օպցիոնի գնորդը իրավունք է ձեռք բերում վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Վաճառքի օպցիոնի վաճառք նշանակում է, որ վաճառքի օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում գնել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Մի կողմի համար գնման օպցիոնի առքը մյուս կողմի համար նշանակում է գնման օպցիոնի վաճառք: Մի կողմի համար վաճառքի օպցիոնի առքը մյուս կողմի համար նշանակում է վաճառքի օպցիոնի վաճառք:

3) ***«Քանակը», «Ընդհանուր գումարը»*** սյունակները լրացվում են սույն կանոնակարգի 24-րդ և 29-րդ կետերով սահմանված արժույթով և արժեքղթերով ֆորվարդների լրացման հրահանգին համապատասխան՝ կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվից (այլ ակտիվներով օպցիոնների դեպքում աղյուսակի վերոնշյալ սյունակները լրացվում են 29-րդ կետով սահմանված արժեքղթերով ֆորվարդների լրացման հրահանգին համապատասխան):
4) ***«Օպցիոնի կատարման ձևը»*** սյունակում նշվում է «ամերիկյան», եթե օպցիոնը կարող է իրականացվել օպցիոն պայմանագրի ժամկետի ընթացքում ցանկացած օր, կամ «եվրոպական», եթե օպցիոնը կարող է իրականացվել միայն ժամկետը լրանալու օրը, կամ «բերմուդյան», եթե օպցիոնը կարող է իրականացվել նախապես սահմանված օրերին, կամ «բարիեր», եթե օպցիոնը իրականացվում է ավտոմատ, եթե գինը հասնում է ինչ-որ մակարդակի, իսկ այլ տեսակի օպցիոնների դեպքում նշվում է «այլ»:
35. *Հաշվետվության 10-րդ, 11-րդ և 12-րդ աղյուսակներում* լրացվում են հաշվետու անձանց կողմից կնքված փոխարժեքային, արժութային և տոկոսադրույքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:
36. Հաշվետվության 10-րդ, 11-րդ և 12-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.
1) ***«Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ/տրամադրման սվոփ)»*** սյունակում սվոփի հիմքում ընկած արժույթի ներգրավման դեպքում լրացվում է «ներգրավման սվոփ», իսկ սվոփի հիմքում ընկած արժույթի տրամադրման դեպքում՝ «տրամադրման սվոփ»:
2) ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ISO կոդը»*** սյունակում նշվում է սվոփ գործարքի հիմքում ընկած արժույթի ISO կոդը:
3) ***«Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է հաշվետու անձի կողմից վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):
4) ***«Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է հաշվետու անձին վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն): Ընդ որում՝ հաշվետվության 10-րդ և 11-րդ աղյուսակների սվոփի (սվոփ գործարքի) հիմքում ընկած արժույթը որոշվում է 25-րդ կետում սահմանված սկզբունքով: Աղյուսակ 12-ի համաձայն՝ սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը տոկոսային վճարումների հաշվարկման համար հիմք հանդիսացող դրամական միջոցների արժույթն է:
5) ***«Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»*** ենթասյունակում լրացվում է սփոթ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ ***«Գործարքի արժույթի ծավալը»*** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով): Սույն կանոնակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով սվոփի հիմքում ընկած արժույթը որոշելիս երկու արժույթների ծավալների հարաբերության որոշման համար հիմք են ընդունվում սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալները:
6) ***«Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»*** ենթասյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ ***«Գործարքի արժույթի ծավալը»*** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով): Ընդ որում՝ փոխանակվող արժույթների ծավալը չի ներառում ներգրավված/տրամադրված արժույթների դիմաց վճարվող/ստացվող տոկոսագումարները (արժութային սվոփի դեպքում):
7) ***«Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է սփոթ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:
8) ***«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:
37. *Հաշվետվության 13-րդ աղյուսակում* լրացվում են 16-րդ կետում սահմանված ժամկետներում ինչպես կնքված (վերակնքված) և (կամ) կատարված (փակված) փոխարժեքային տարբերության վրա հիմնված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: «Փոխարժեքային տարբերության վրա հիմնված գործարքը» համաձայնություն է երկու կողմերի միջև որոշակի պարբերականությամբ միմյանց միջև փոխանակել ակտիվի փոխարժեքային տարբերությունները գործարքի կնքման և փակման միջակայքում: Ընդ որում, գործարքի կնքման պահին նախապես չի սահմանվում գործարքի փակման ժամկետը:

Ընդ որում.
1) Կնքված է համարվում նոր կնքված գործարքը (նոր բացված դիրքը),
2) Վերակնքված է համարվում նախկինում կնքված գործարքի վերակնքման գործարքը,
3) Կատարված գործարք է համարվում կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերագնահատումը՝ փաստացի (կատարման) փոխարժեքով,
4) Փակված գործարք է համարվում կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերջնական փակումը:

38. Հաշվետվության 13-րդ աղյուսակը լրացվում է հետևյալ դեպքերում.
1) գործարքի նոր կնքման դեպքում,
2) նախկինում կնքված (վերակնքված) գործարքի կատարման դեպքում,
3) փակման գործարքի դեպքում, այսինքն՝ գործարքի դիրքերի վերջնական կատարման դեպքում:

39. *Հաշվետվության 13-րդ աղյուսակի* սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.
1) ***«Գնվող/վաճառվող արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է գործարքի կնքման (վերակնքման) պահին գնվող, կատարման (փակման) պահին վաճառվող արժույթի ISO կոդը:
2) ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով գնվում/վաճառվում է կնքման (վերակնքման), կատարման (փակման) գործարքների առարկա հանդիսացող արժույթը:
3) ***«Բացման (վերակնքման) փոխարժեքը»*** սյունակում լրացվում է արտարժութային գործարքի կնքման (վերակնքման) պահին գնվող (գնված) միավոր արժույթի ձեռքբերման փոխարժեքը:
4) ***«Կատարման փոխարժեքը»*** սյունակում լրացվում է գործարքի կատարման պահին գնված արժույթի փաստացի փոխարժեքը (վերակնքման դեպքում) կամ դիրքի փակման պահին վաճառվող (նախկինում գնված) արժույթի փաստացի փոխարժեքը (գործարքի վերջնական փակման դեպքում):
5) ***«Օգուտը (եկամուտը)/կորուստը(ծախսը)»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում առաջացած օգուտը(եկամուտը)/կորուստը(ծախսը) գործարքի արժույթով:
6) ***«Գործարքի կնքման (վերակնքման) ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջին անգամ գործարքի կնքման ամսաթիվը:
7) ***«Գործարքի կատարման (փակման) ամսաթիվը»*** սյունակում լրացվում է կնքված (վերակնքված) կամ փակված գործարքի կատարման կամ վերջնական կատարման ամսաթիվը:
8) ***«Գործարքի բնույթը»***, կախված սույն կանոնակարգի 37-րդ կետով սահմանված դրույթների համաձայն որոշված գործարքի բնույթից, սույն սյունակում լրացվում է «կնքված»՝ կնքված գործարքի առաջին անգամ ներկայացնելու դեպքում, «կատարված»՝ կնքված (վերակնքված) գործարքի կատարման դեպքում, կամ «փակված»՝ կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերջնական կատարման դեպքում: Ընդ որում, եթե գործարքը կնքվել և փակվել է միևնույն հաշվետու օրվա ընթացքում, ապա սույն սյունակում անհրաժեշտ է նշել «փակված»:

40. *Հաշվետվության 14-րդ աղյուսակում* լրացվում են 16-րդ կետում սահմանված ժամկետներում կնքված, և (կամ) փակված գնային տարբերության վրա հիմնված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: «Գնային տարբերության վրա հիմնված գործարքը» համաձայնություն է երկու կողմերի միջև՝ որոշակի պարբերականությամբ միմյանց միջև փոխանակել ակտիվի գնային տարբերությունները: Ընդ որում, գործարքի կնքման պահին նախապես չի սահմանվում գործարքի փակման ժամկետը: Ընդ որում.
1) Կնքված է համարվում նոր կնքված գործարքը (ակտիվի ձեռքբերումը),
2) Փակված գործարք է համարվում նախկինում կնքված գործարքի արդյունքում ձեռք բերված ակտիվի վաճառքը:

41. Հաշվետվության 14-րդ աղյուսակը լրացվում է հետևյալ դեպքերում.
1) գործարքի նոր կնքման դեպքում,
2) փակման գործարքի դեպքում, այսինքն՝ նախկինում կնքված գործարքի արդյունքում ձեռք բերված ակտիվի վաճառքի դեպքում:

42. *Հաշվետվության 14-րդ աղյուսակի* սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.
1) ***«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի տեսակը»*** սյունակում նշվում է գործարքի հիմքում ընկած ակտիվի անվանումը (արժեթուղթ, ոսկի, նավթ և այլն):
2) ***«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի ձեռքբերման (բացման) գինը»*** սյունակում լրացվում է գործարքի կնքման պահին ակտիվի ձեռքբերման գինը:

3) ***«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի վաճառքի (փակման) գինը»*** սյունակում լրացվում է գործարքի վերջնական կատարման (ակտիվի վաճառքի) փաստացի գինը: Սույն սյունակը գնային տարբերության վրա հիմնված գործարքների կնքման դեպքում չի լրացվում:
4) ***«Օգուտը (եկամուտը)/կորուստը(ծախսը)»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում առաջացած օգուտը (եկամուտը)/կորուստը (ծախսը) բացման գնի արժույթով:
5) ***«Գործարքի փակման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է փակված գործարքի վերջնական կատարման ամսաթիվը:
6) ***«Գործարքի բնույթը»***, կախված սույն կանոնակարգի 40-րդ կետով սահմանված դրույթների համաձայն որոշված գործարքի բնույթից, սույն սյունակում լրացվում է «կնքված» կամ «փակված»: Ընդ որում, եթե գործարքը կնքվել և փակվել է միևնույն հաշվետու օրվա ընթացքում, ապա սույն սյունակում անհրաժեշտ է նշել «փակված»:

ԳԼՈՒԽ 7. ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

43. Առևտրի գրանցամատյանում առկա տեղեկությունների օգտագործողներն են.
1) Ածանցյալ ֆինանսական գործարքի կողմերը: Այս անձանց հասանելի են միայն իրենց կողմից կնքված ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները,
2) Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք: Այս անձանց հասանելի են միայն իրենց կամ իրենց հաճախորդների համար կնքած ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները,
3) Հարկային մարմինը, որին ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները և ծավալները սահմանվում են Կենտրոնական բանկի և Հարկային մարմնի համատեղ որոշմամբ հաստատված «Ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյանից հարկային մարմնին տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները և ծավալները» կանոնակարգ 4/19-ով,
4) Կենտրոնական բանկը:

44. Գործարքի կողմերը, ինչպես նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձինք (իրենց հաճախորդների հաշվին կնքած ածանցյալ ֆինանսական գործարքների համար) Առևտրի գրանցամատյանից տեղեկություններ ստանալու նպատակով հարցում են կատարում Առևտրի գրանցամատյան և իրավասու են Առևտրի գրանցամատյան ներկայացված իրենց (հաճախորդների) գործարքների վերաբերյալ տեղեկություններ ստանալ:

45. Առևտրի գրանցամատյանից տեղեկատվության ստացման համար հարցում կատարող անձը պարտավոր է ներկայացնել գրավոր հարցում-դիմում (այսուհետ՝ հարցում)՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի: Հարցումը ներկայացվում է այն եղանակով, որով Առևտրի գրանցամատյան են ներկայացվել տվյալ գործարքների վերաբերյալ հաշվետվությունները:

46. Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող և սույն գլխի համաձայն հարցում կատարած անձանց, որոնք ունեն Սի-Բի-էՅ-ՆեԹ համակարգ, ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ կազմված պատասխան տեղեկությունները Առևտրի գրանցամատյանի կողմից տրամադրվում են Սի-Բի-էՅ-ՆեԹ համակարգի միջոցով: Այլ անձանց դեպքում ուղարկվում են տվյալ անձի կողմից հարցման մեջ նշված էլեկտրոնային հասցեին՝ «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հավատարմագրված հավաստագրման կենտրոնի կողմից թողարկված էլեկտրոնային թվային ստորագրությամբ և գաղտնաբառով, ընդ որում՝ գաղտնաբառն ուղարկվում է տվյալ անձի կողմից հարցման մեջ նշված բջջային հեռախոսահամարին:

47. Անհրաժեշտության դեպքում ածանցյալ ֆինանսական գործարքի վերաբերյալ պատասխան տեղեկանքը Առևտրի գրանցամատյանի կողմից կարող է տրամադրվել թղթային եղանակով՝ ծրարով: Թղթային եղանակով պատասխան տեղեկանքը ստորագրվում է Առևտրի գրանցամատյանի վարման համար պատասխանատու ղեկավարի, նրա բացակայության դեպքում՝ համապատասխան աշխատակցի կողմից և կնքվում «Ածանցյալ ֆինանսական գործարքների առևտրի միասնական գրանցամատյան» դրոշմակնիքով: Հարցում կատարած անձին ծրարը հանձնելիս ստուգվում է ՀՎՀՀ-ն հավաստիացնող փաստաթղթում նշված ՀՎՀՀ-ն՝ համեմատելով նախկինում հաշվետվությամբ ներկայացված համարի հետ (լիազորագրի ներկայացման դեպքում համեմատվում են լիազորագրում նշված տվյալները):

48. Սույն գլխով հարցում կատարած անձանց ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները Առևտրի Գրանցամատյանի կողմից տրամադրվում են հարցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

49. Այն դեպքերում, երբ Առևտրի գրանցամատյանից ստացված տեղեկատվությունը պարունակում է անհամապատասխանություններ տեղեկատվությունը ստացած անձի տվյալների հետ, վերջինս տեղեկացնում է Առևտրի գրանցամատյանին՝ անհամապատասխանությունները ճշգրտելու և ճշգրտված տեղեկատվությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու նպատակով:

ԳԼՈՒԽ 8. ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

50. Հաշվետու անձինք պարտավոր են Առևտրի գրանցամատյան ներկայացնել ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն:

51. Տրամադրված տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության համար օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում հաշվետու անձը:

52. Առևտրի գրանցամատյանը վարողը պատասխանատվություն է կրում այն դեպքում, երբ իր կողմից տրամադրած տեղեկատվությունը չի համապատասխանում հաշվետու անձի կողմից Առևտրի գրանցամատյանին տրամադրած տեղեկատվությանը:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 204-Ն որոշման Հավելված

ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ռեզիդենտության սկզբունքը հիմնվում է երկու հիմնական հասկացությունների վրա՝ տնտեսական տարածք և տնտեսական շահերի կենտրոն: Երկրի տնտեսական տարածք է համարվում պետության կողմից ղեկավարվող այն աշխարհագրական տարածքը, որի շրջանակներում անհատները ազատ կարող են տեղաշարժվել, իսկ ապրանքները և կապիտալը՝ շրջանառվել: Հարկ է նկատել, որ տնտեսական տարածքը կարող է տարբերվել երկրի վարչաքաղաքական տարածքից: Այսպիսով, տնտեսվարող սուբյեկտը համարվում է տվյալ տնտեսության համար ռեզիդենտ, եթե նրա տնտեսական շահերի հիմնական շրջանակը (կենտրոնը) այդ երկրի տնտեսական տարածքում է: Ընդ որում, տվյալ երկրում տնտեսական շահեր ունենալը նշանակում է, որ տվյալ երկրի տնտեսական տարածքում գոյություն ունի բնակավայր՝ տուն կամ բնակարան, արտադրության կազմակերպման համար նախատեսված շենք, շինություն կամ այլ տարածք, որտեղ կամ որտեղից տնտեսվարող սուբյեկտն իրականացնում է և հետագայում էլ մտադրություն ունի իրականացնել որոշակի ծավալի տնտեսական գործունեություն և գործառնություններ այլ սուբյեկտների հետ՝ անորոշ ժամանակով կամ որոշակի երկար ժամանակահատվածում (սովորաբար՝ 1 տարի կամ ավելի): Այսպիսով, վիճակագրական ռեզիդենտությունը հիմնված չէ ազգության, քաղաքացիության կամ այլ իրավական չափորոշիչների վրա, այլ սահմանվում է՝ զուտ տնտեսագիտական մոտեցումներից և սահմանումներից ելնելով: Ռեզիդենտության որոշումն, այնուհանդերձ, միշտ չէ, որ պարզ է և որոշակիորեն կապված է նաև տվյալ սուբյեկտի տեսակի և բնույթի հետ: Հաճախ սուբյեկտի ռեզիդենտությունը որոշելու պայմանները հստակ չեն լինում, ինչը բարդացնում է դասակարգման իրականացումը:

2. Ստորև բերվում են ռեզիդենտության որոշման մի քանի սկզբունքներ:

1) *Ֆիզիկական անձանց և տնային տնտեսությունների ռեզիդենտությունը:* Տնային տնտեսությունը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ ունի տուն կամ բնակարան, որը տնային տնտեսության անդամների ապրելու հիմնական վայրն է: Ընդ որում, միևնույն տնային տնտեսությանը պատկանող բոլոր անհատները պետք է միևնույն տնտեսության ռեզիդենտներ համարվեն:

Եթե ֆիզիկական անձը որոշակի կարճ (մինչև մեկ տարի) ժամանակով բացակայում է տվյալ երկրի տնտեսական տարածքից, ապա նա դեռևս շարունակում է համարվել տվյալ տնտեսության ռեզիդենտ: Տնտեսական տարածքից բացակայող անհատների հետևյալ խմբերը համարվում են տվյալ երկրի ռեզիդենտներ.

ա. Զբոսաշրջիկները և ճանապարհորդները, այսինքն՝ այն անհատները, ովքեր գործնական, ուսման, բուժման կամ այլ նպատակներով ժամանակավորապես (մինչև մեկ տարի ժամանակով) հեռանում են երկրի տնտեսական տարածքից,

բ. Անհատների հետևյալ կատեգորիաները, ովքեր ժամանակավորապես կամ մշտապես աշխատում են տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս,

$բ_1$. սեզոնային աշխատողները, ովքեր տարվա մի մասը աշխատում են այլ երկրում և հետո վերադառնում են իրենց տնային տնտեսություն,

$բ_2$. սահմանը հատող աշխատողները, ովքեր ամեն օր կամ ամեն շաբաթ անցնում են երկրի սահմանը, աշխատում այլ երկրում և վերադառնում,

$բ_3$. տվյալ երկրի տարածքում գործող միջազգային կազմակերպությունների աշխատողները,

$բ_4$. տեղացի այն անհատները, ովքեր աշխատում են տվյալ երկրի տարածքում տեղակայված այլ երկրների դեսպանատներում, ռազմական բազաներում և այլ նմանատիպ ներկայացուցչություններում,

$բ_5$. նավերի, ինքնաթիռների և նմանատիպ այլ շարժական կառուցվածքների անձնակազմի անդամները, ովքեր գրեթե մշտապես գործում են երկրի տարածքից դուրս,

$բ_6$. ուսանողները, ովքեր սովորում են այլ երկրներում, եթե նույնիսկ ուսման տևողությունը մեկ տարուց ավելի է:

2) *Ձեռնարկությունների կամ կորպորացիաների ռեզիդենտությունը:* Ձեռնարկությունը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ նրա տնտեսական շահերի կենտրոնն է և որի տնտեսական տարածքում իրականացնում է որոշակի ծավալի տնտեսական գործունեություն՝ ապրանքների արտադրություն և ծառայությունների մատուցում և/կամ հողի, շենքերի, շինությունների սեփականատեր է: Արտասահմանյան ձեռնարկությունը համարվում է ռեզիդենտ, եթե տվյալ տնտեսությունում տնտեսական գործունեություն է իրականացնում կամ մտադիր է իրականացնել մեկ տարուց ավելի ժամանակով: Բացի վերը նշվածից, որոշ սահմանային դեպքերում (երբ ձեռնարկությունը կամ նրա մասնաճյուղը աշխատանքներ են իրականացնում այլ երկրներում) հաշվի են առնվում նաև այնպիսի պայմաններ, ինչպիսիք են՝ սուբյեկտի գրանցման վայրը, հարկերի վճարման վայրը, ինքնուրույն ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունը, սուբյեկտի կողմից իրականացվող գործառնությունների առանձին հաշվառման հնարավորությունը (հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի հաշվետվություն և այլն):

3) *Շահույթ չհետապնդող կազմակերպությունների ռեզիդենտությունը:* Շահույթ չհետապնդող կազմակերպությունը համարվում է այն երկրի կամ տնտեսական տարածքի ռեզիդենտ, որի գործող օրենսդրությամբ կամ սահմանված կանոններով է ստեղծվել տվյալ կազմակերպությունը, և որտեղ նրա՝ որպես իրավական կամ սոցիալական միավորի գոյությունը պաշտոնապես ճանաչված և գրանցված է: Շահույթ չհետապնդող կազմակերպությունների մասնաճյուղերի դեպքում հաշվի է առնվում տվյալ երկրում գործունեության ժամկետը: Եթե արտասահմանյան երկրի կազմակերպությունը տվյալ երկրում մասնաճյուղի միջոցով գործունեություն է ծավալում մեկ տարուց ավելի ժամանակով, ապա տվյալ մասնաճյուղը համարվում է այդ երկրի ռեզիդենտ, իսկ գլխամասային կազմակերպությունից ստացվող ֆինանսավորումը դիտարկվում է որպես արտասահմանից ստացվող տրանսֆերտ:

4) *Պետական կառավարման մարմինների ռեզիդենտությունը:* Տվյալ երկրի պետական կառավարման բոլոր մարմինները համարվում են տվյալ երկրի ռեզիդենտներ, նույնիսկ եթե դրանք տեղակայված են այլ երկրների տարածքում:

Այսպես, ռեզիդենտ են համարվում.

ա. տվյալ երկրի տարածքում գտնվող կենտրոնական, տեղական կառավարման մարմինների բոլոր ստորաբաժանումները,

բ. տվյալ երկրի՝ այլ երկրներում տեղակայված դեսպանատները, հյուպատոսարանները, ներկայացուցչությունները, ռազմական բազաները:

Այլ երկրների դեսպանատները, հյուպատոսարանները, ներկայացուցչությունները, ռազմական բազաները, որոնք տեղակայված են տվյալ երկրի տարածքում, համարվում են ոչ ռեզիդենտներ:

5) *Միջազգային կազմակերպությունների ռեզիդենտությունը:* Միջազգային կազմակերպությունները որևէ երկրի ռեզիդենտ չեն համարվում, նույնիսկ այն երկրի, որտեղ դրանք գործում են: Միջազգային կազմակերպությունների աշխատակիցները, սակայն, ինչպես արդեն նշվել է, համարվում են այն երկրի ռեզիդենտներ, որի տարածքում տեղակայված է տվյալ կազմակերպությունը:

3. Այսպիսով, բոլոր այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց տնտեսական շահերը տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս են, համարվում են ոչ ռեզիդենտներ, իսկ նրանց հետ իրականացվող բոլոր գործառնությունները դիտարկվում են որպես գործառնություններ ոչ ռեզիդենտների հետ: Տվյալ տնտեսության տեսանկյունից, ոչ ռեզիդենտների հետ փոխհարաբերությունները դիտվում են իբրև փոխհարաբերություններ արտաքին աշխարհի հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 204-Ն որոշման Հավելված

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական, ամսական)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը	Միավոր արժույթի փոխարժեքը	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ____________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____________________

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՖՅՈՒՉԵՐՍ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը _____________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (Ֆյուչերս առք/Ֆյուչերս վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆյուչերսների քանակը	Ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Միավոր արժույթի փոխարժեքը	Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը	Ընդհանուր գումարը	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ _________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ______________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչեւ մարում եկամտաբերությունը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար` ______________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ` ______________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖՅՈՒՉԵՐՍ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ______________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆյուչերսների քանակը	Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժեթղթերի քանակը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթի ծավալը՝ անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչեւ մարում եկամտաբերությունը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ______________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ______________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆորվարդի հիմքում ընկած ակտիվը	Միավոր ակտիվի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Արժույթի ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՖՅՈՒՉԵՐՍ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (Ֆյուչերս առք/Ֆյուչերս վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆյուչերսների քանակը	Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվի քանակը	Ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվը	Միավոր ակտիվի գինը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 7. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ___________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)	Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)	Գործարքի բնույթը	Օպցիոնի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Միավոր արժույթի փոխարժեքը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը (գումարը)	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Օպցիոնի պարգևավճարի		Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի կատարման ձևը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
													Մեծությունը	Արժույթի ISO կոդը																			

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 8. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ______________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)	Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչեւ մարում եկամտաբերությունը	Օպցիոնի պարգևավճարի		Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Գործարքի կնքման վայրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի կատարման ձևը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
																		Մեծությունը	Արժույթի ISO կոդը																			

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ______________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ______________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 9. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)	Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)	Գործարքի բնույթը	Օպցիոնի հիմքում ընկած ակտիվը	Միավոր ակտիվի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի պարգևավճարի		Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն, ազգանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի կատարման ձևը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
														Մեծությունը	Արժույթի ISO կոդը																			

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 10. ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ______________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անունն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի բնույթը	Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ / տրամադրման սվոփ)	Սվոփի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Սփոթ փոխարժեքը	Ֆորվարդ (գործարքի մարման) փոխարժեքը	Գործարքի արժույթի ISO կոդը	Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը		Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը		Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անունն ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
											Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Գործարքի արժույթի ծավալը	Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Գործարքի արժույթի ծավալը																			

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար __________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 11. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ______________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի բնույթը	Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ / տրամադրման սվոփ)	Սվոփի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Սփոթ փոխարժեքը	Ֆորվարդ (մարման) փոխարժեքը	Գործարքի արժույթի ISO կոդը	Ներգրավված արժույթի համար վճարվող տարեկան տոկոսադրույք	Տրամադրված արժույթի համար ստացվող տարեկան տոկոսադրույք	Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը		Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
													Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Գործարքի արժույթի ծավալը	Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Գործարքի արժույթի ծավալը																			

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ______________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 12. ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ______________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի բնույթը	Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Գործարքի արժույթի ISO կոդը	Վճարվող տոկոսադրույք	Ստացվող տոկոսադրույք	Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը	Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը	Լողացող տոկոսադրույքի վերագնանշման հաճախականությունը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 13. ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գնվող/վաճառվող արժույթի ISO կոդը	Գործարքի արժույթի ISO կոդը	Բացման (վերակնքման) փոխարժեքը	Կատարման փոխարժեքը	Գործարքի ընդհանուր ծավալը (գործարքի արժույթով)		Օգուտը (եկամուտը)/կորուստը(ծախսը)	Գործարքի կնքման	Գործարքի կատարման (փակման) ամսաթիվը	Գործարքի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
									Բացման փոխարժեքով	Կատարման փոխարժեքով										
1																				
2																				
…																				

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ _________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____

ԱՂՅՈՒՍԱԿ 14. ԳՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու անձի անվանումը ____________________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ______________________________

N	Հաշվետու անձը	Անվանումը (անուն ազգանունը)	ՀՎՀՀ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի տեսակը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի ձեռքբերման (բացման) գինը	Բացման գնի արժույթի ISO կոդ	Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի վաճառքի (փակման) գինը	Փակման գնի արժույթի ISO կոդ	Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի քանակը (առկայության դեպքում)	Գործարքի ընդհանուր ծավալը		Օգուտը (եկամուտը)/կորուստը(ծախսը)	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի փակման ամսաթիվը	Գործարքի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
														Բացման գնով	Փակման գնով										

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 204-Ն որոշման Հավելվածի

ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ-ԴԻՄՈՒՄ

Հարցման իրականացման ամսաթիվը ____________________________________

1	Հարցում կատարող անձի անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)	
2	Հարցում կատարող անձի ՀՎՀՀ	
3	Էլեկտրոնային հասցեն (բացառությամբ այն անձանց, որոնք ունեն Սի-Բի-Էյ-Նեթ)	
4	Բջջային հեռախոսահամար (բացառությամբ այն անձանց, որոնք ունեն Սի-Բի-Էյ-Նեթ)	
5	Հարցում կատարող անձի գտնվելու վայրը (փաստացի բնակության վայրը), անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)	
6	Գործարքի կնքման ամսաթիվը	
7	Գործարքի նույնականացուցիչ համարը	
8	Պատասխան տեղեկատվության ստացման եղանակը	Թղթային ☐ Էլեկտրոնային ☐

*«Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ածանցյալ ֆինանսական գործիքների էության պարզաբանման միջոցով ապահովել ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայի բնականոն զարգացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3.1-ին հոդվածի 2-րդ մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 սեպտեմբերի 2017 թ., N 205-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 205-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/18
ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ համարվում է, որ ածանցյալ ֆինանսական գործիքներով պարտավորությունների վերջնահաշվարկն իրականացվում է *դրամական միջոցներով*, եթե ածանցյալ ֆինանսական գործիքի վերջնահաշվարկի օրը այս գործիքներով գործարքի կողմերը պարտավոր են և (կամ) իրավունք ունեն իրենց պարտավորությունները կատարել հաշվանցով և (կամ) զուտացմամբ՝ կողմերի միջև փոխանցելով մի գումար՝ առանց մատակարարելու գործարքի հիմքում ընկած ակտիվները:

2. Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համարվում է, որ ածանցյալ ֆինանսական գործիքներով պարտավորությունների վերջնահաշվարկն իրականացվում է *բնեղենով*, եթե ածանցյալ ֆինանսական գործիքի վերջնահաշվարկի օրը այս գործիքներով գործարքի կողմերը պարտավոր են իրենց պարտավորությունները կատարել գործիքի հիմքում ընկած ակտիվների փոխանցմամբ (առաքմամբ):

---
* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 09.10. 2017 թ. (ՀՀԳՏ N29 (598)[1], 20.10.2017):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյանի արդյունավետ գործունեության ապահովման միջոցով բարձրացնել ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունը, այդ թվում՝ հարկային մարմնի համար,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետում.

ա. 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ***«Ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ»***՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ով սահմանված մեթոդաբանության:»,

գ. 15-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16-րդ, 17-րդ և 18-րդ ենթակետեր.

«16) ***«Հաշվանց»***՝ վերջնահաշվարկի բնույթ, որի դեպքում ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկի օրը կողմերի միջև կատարվող պարտավորությունները պետք է հաշվանցվեն՝ կողմերի միջև փոխանցելով մի գումար՝ առանց մատակարարելու գործարքի հիմքում ընկած ակտիվները:

17) ***«Առաքում»***՝ վերջնահաշվարկի բնույթ, որի դեպքում ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկի օրը կողմերը փոխանցում (առաքում) են հիմքում ընկած ակտիվները:

18) ***«Զուտացում»***՝ համաձայն «Սնանկության մասին» կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:»,

2) Կանոնակարգի 4-րդ կետով սահմանված աղյուսակի 6-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.	Արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքների վերաբերյալ	օրական, ամսական

»,

3) Կանոնակարգի 14-րդ կետը «և այլն):» բառերից հետո լրացնել «Թիվ 6 ամսական և Թիվ 18 ամսական հաշվետվությունները ներկայացնելիս հաշվետվության համարին ի լրումն անհրաժեշտ է լրացնել «m» տառը:» նախադասությամբ,

4) Կանոնակարգի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Սի-Բի-էյ-Նեթ համակարգով և ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով օրական հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև ժամը 17:00-ը, իսկ համակարգի խափանման դեպքում ներկայացվում են մագնիսական կամ

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. սեպտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 09.10. 2017 թ. (ՀՀԳՏ N29 (598)[1], 20.10.2017):

էլեկտրոնային կրիչներով՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 09:30-ը, որում ներառվում են տվյալ օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ը (հաշվետու օր) կնքված գործարքների (կատարված գործառնությունների) վերաբերյալ տեղեկությունները, եթե սույն կանոնակարգով հաշվետվության կոնկրետ ձևի համար այլ բան սահմանված չէ: Օրական հաշվետվության չներկայացնելը հանդիսանում է հայտարարություն առ այն, որ հաշվետվությամբ նախատեսված գործարքներ ներդրումային ծառայություններ մատուցող անձը չի իրականացրել:»,

5) Կանոնակարգի 23-րդ կետի առաջին նախադասությունը հանել,
6) Կանոնակարգի 6-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 6
ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Թիվ 6 օրական հաշվետվությունը ներկայացվում է սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված կարգով, ընդ որում՝ հաշվետվությունում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից): Թիվ 6 հաշվետվությունը (բացառությամբ 1-ին, 2-րդ, 15-րդ և 16-րդ աղյուսակների) ներկայացվում է նաև ամսական կտրվածքով, որտեղ արտացոլվում են Կենտրոնական բանկ ներկայացված և հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ վերջնահաշվարկ չկատարված ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում, այն դեպքերում, երբ նույն օրվա ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը ներկայացնում է և՛ օրական հաշվետվություն, և՛ ամսական հաշվետվություն, ապա այդ օրերի համար օրական և ամսական հաշվետվությունները ներկայացվում են առանձին ֆայլերով:

50. Թիվ 6 հաշվետվության իմաստով գործարքի կնքում է համարվում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից արժեթղթերի առքի կամ վաճառքի (ռեպո) պայմանագրերի, ածանցյալ ֆինանսական գործարքների կնքումը ֆոնդային բորսայում, այլ կարգավորվող շուկայում կամ չկարգավորվող շուկայում:

51. Թիվ 6 հաշվետվության իմաստով փոփոխված գործարքներ են համարվում սույն հաշվետվության 2-ից 14-րդ աղյուսակներում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները (պայմանների փոփոխություն, գործարքի ժամկետի երկարաձգում, կրճատում, և այլն): Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության աղյուսակներում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել: Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն), որով կնքվել են գործարքները:

52. Թիվ 6 հաշվետվությունը չի ներկայացվում մարման գործարքների համար:

53. Թիվ 6 հաշվետվությունում լրացման ենթակա բոլոր թվերը կլորացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

54. Թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 16 աղյուսակից: Ընդ որում, տեղաբաշխման շրջանակում կնքված գործարքները (արժեթղթերի առաջին վաճառքը ներդրողներին) թիվ 6 հաշվետվությունում չեն արտացոլվում: Այդ գործարքները արտացոլվում են թիվ 9 հաշվետվությունում:

55. Եթե արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում հիմնադիրների համախմբված դրամական միջոցներով կամ արժեթղթերով ներդրումային ծառայություններ մատուցող անձն իրականացնում է գործարքներ հիմնադիրներից յուրաքանչյուրի համար միևնույն պայմաններով, և այդ գործարքների իրականացման արդյունքում մուտք եղած ակտիվները ներդրումային ծառայություններ մատուցող անձը բաշխում է գործարքի մասնակից հիմնադիրների հաշիվներում՝ համաձայն այդ հիմնադիրների հետ կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրում նշված կանոնների, ապա թիվ 6 հաշվետվությունում այդ գործարքները ներկայացվում են որպես մեկ՝ «իր անունից և հաճախորդի հաշվին» համախմբված գործարք, այլ ոչ թե բազմաթիվ գործարքներ՝ յուրաքանչյուր հիմնադրի համար առանձին: Եթե այդ գործարքների պարամետրերը ըստ հիմնադիրների տարբերվում են, ապա դրանք ներկայացվում են առանձին գործարքների տեսքով:

56. Թիվ 6 հաշվետվությունում ներառվում են նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձի հետ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագիր կնքած հիմնադիրների միջև և (կամ) հիմնադիրների և ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջև արժեթղթերով և դրամական միջոցներով առք ու վաճառքի, ածանցյալ ֆինանսական գործիքների կնքման գործարքները: Առաջին դեպքում ներդրումային ծառայություններ մատուցող անձի և հիմնադրի միջև կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի հիման վրա ընկերությունն իրականացնում է իր անունից և հաճախորդների հաշվին գործառնություններ, որոնց արդյունքում հիմնադիրների միջև տեղի է ունենում արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցում, իսկ իր անունից և հիմնադիրների հաշվին գործող ընկերությունը հանդես է գալիս գործարքի և՛ գնորդ, և՛ վաճառող կողմ: Երկրորդ դեպքում գործարքների կնքման հիմք է հանդիսանում ներդրումային ծառայություններ մատուցող անձի և հիմնադրի՝ ի դեմս ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջև կնքված առք ու վաճառքի պայմանագիրը, որի հիման վրա ներդրումային ծառայություններ մատուցող անձն իրականացնում է մի կողմից՝ իր անունից և իր հաշվին, մյուս կողմից՝ իր անունից և հաճախորդի հաշվին գործառնություններ:

57. Այն դեպքում, երբ Թիվ 6 հաշվետվության մեջ անհրաժեշտ է լրացնել այնպիսի գործարք, որի շրջանակներում ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարք է կնքել միաժամանակ մեկից ավելի անձանց (իր և/կամ հաճախորդների) անունից և/կամ հաշվին և անհրաժեշտություն է առաջանում «Ում հաշվին է գործարքը կնքվել», «Ում անունից է գործարքը կնքվել», «Անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)», «ՀՎՀՀ (ՀԾՀ)» սյունակներում մեկից ավելի ընտրություն կատարել, այս գործարքը ներկայացվում է ինչպես համախմբված՝ մեկ տողով, այնպես էլ առանձին տողերով՝ ըստ յուրաքանչյուր անձի: Ընդ որում՝ համախմբված գործարքի դեպքում «N» սյունակում նշվում է տվյալ գործարքի հերթական համարը, իսկ «Ում հաշվին է գործարքը կնքվել», «Ում անունից է գործարքը կնքվել», «Անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)» և «ՀՎՀՀ (ՀԾՀ)» սյունակներում՝ «Համախմբված»: Յուրաքանչյուր անձի համար լրացվող տողերի «N» սյունակը լրացման ենթակա չէ, իսկ «Ում հաշվին է գործարքը կնքվել», «Ում անունից է գործարքը կնքվել», «Անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)», «ՀՎՀՀ (ՀԾՀ)» սյունակներում նշվում են տվյալ անձի համապատասխան տվյալները:

58. Թիվ 6 հաշվետվության աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Ում հաշվին է գործարքը կնքվել»*** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին կնքվել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»:
2) ***«Անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)»*** սյունակում լրացվում է այն անձի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), որի հաշվին (2-րդ սյունակ) կամ անունից (5-րդ սյունակ) կնքվել է տվյալ գործարքը: Եթե տվյալ անձը հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձն է, սույն սյունակը լրացման ենթակա չէ:
3) ***«ՀՎՀՀ (ՀԾՀ)»*** սյունակում լրացվում է այն անձի հաշվառման համարը (ֆիզիկական անձի դեպքում՝ ՀԾՀ, իսկ ՀԾՀ-ի բացակայության դեպքում՝ անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը), որի հաշվին (3-րդ սյունակ) կամ անունից (6-րդ սյունակ) կնքվել է տվյալ գործարքը: Եթե տվյալ անձը հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձն է, սույն սյունակը լրացման ենթակա չէ:
4) ***«Ում անունից է գործարքը կնքվել»*** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի անունից կնքվել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»: Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների դեպքում ձեռք բերված պարտատոմսերի մասին տեղեկությունները լրացնելիս սույն սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որը տեղաբաշխման արդյունքում ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերը:
5) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է գործարքի կնքման ժամը միայն կարգավորվող շուկայում կնքված գործարքների համար: Օտարերկրյա կարգավորվող շուկաներում գործարքների կնքման դեպքում գործարքի կնքման ժամը նշվում է տեղի (Հայաստանի Հանրապետության) ժամանակով (հայտնի լինելու դեպքում): Ընդ որում, գործարքի կնքման ժամը նշվում է հետևյալ կերպ. ժամ:րոպե:վայրկյան (13:50:55):

6) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետում նշված սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:
7) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
8) ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
9) ***«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:
10) ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:
11) ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»*** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:
12) ***«Գործարքի կնքման վայրը»*** սյունակը լրացվում է հետևյալ կերպ. եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում, ապա նշվում է կարգավորվող շուկայի օպերատորին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկայում՝ ապա նշվում է տվյալ օպերատորի լրիվ ֆիրմային անվանումը, եթե գործարքը կնքվել է կարգավորվող շուկայից դուրս՝ ապա նշվում է «չկարգավորվող շուկա»: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերով Կենտրոնական բանկի կողմից կազմակերպված աճուրդների ընթացքում կնքված գործարքների դեպքում սույն ենթակետում նշված սյունակում լրացվում է «այլ շուկա»:
13) ***«Գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:
14) ***«Գործարքի մյուս կողմը»*** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող անձին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» նշումը: Ընդ որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է հա-

մարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը: Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների դեպքում ձեռք բերված պարտատոմսերի մասին տեղեկությունները լրացնելիս սույն սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կոդը՝ կախված թողարկողից (ներառյալ՝ այն դեպքերում, երբ հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձը տվյալ պարտատոմսերը ձեռք է բերել այլ անձի միջոցով): Այն դեպքում, երբ գործարքի մյուս կողմը հայտնի չէ, մասնավորապես՝ կազմակերպված շուկաներում (բորսաներում, այլընտրանքային առևտրային համակարգերում և այլ նմանատիպ շուկաներում) կնքված գործարքների դեպքում, սույն սյունակում լրացվում է «կազմակերպված շուկա» (բացառությամբ այս շուկաներում կնքված հասցեական գործարքների):

15) ***«Միջնորդը»*** սյունակը լրացման է ենթակա միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:

16) ***«Գործարքի նույնականացուցիչ համարը»*** սյունակում նշվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:

17) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված», «չեղարկված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից՝ այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից՝ այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», կնքված գործարքի վերջնահաշվարկի կատարումը չեղարկելու դեպքում՝ «չեղարկված», իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ»:

18) ***«Փոփոխված գործարքի ամսաթիվը»*** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:

19) ***«Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

20) ***«Գործարքի վերջնահաշվարկի բնույթը»*** սյունակում լրացվում է
   ա. «հաշվանց», եթե ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկի օրը կողմերի միջև կատարվող պարտավորությունները իրականացվելու են հաշվանցով,
   բ. «զուտացում», եթե կողմերը իրավունք ունեն ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկն իրականացնել զուտացմամբ,
   գ. «հաշվանց և զուտացում», եթե սույն ենթակետի «ա» և «բ» պարբերությունները միաժամանակ կիրառելի են, կամ
   դ. «առաքում», եթե կողմերը իրավունք ունեն ածանցյալ ֆինանսական գործարքի վերջնահաշվարկն իրականացնել ակտիվների առաքմամբ,
   ե. «առաքում և զուտացում», եթե սույն ենթակետի «բ» և «դ» պարբերությունները միաժամանակ կիրառելի են,
   զ. «կողմերի հայեցողությամբ», եթե գործարքի պայմանագրով երկու կողմերը համաձայնվել են գործարքի վերջնահաշվարկի օրը առաքել ակտիվները կամ կատարել պարտավորությունների հաշվանց, կամ
   է. «կողմերի հայեցողությամբ և զուտացում», եթե սույն ենթակետի «բ» և «զ» պարբերությունները միաժամանակ կիրառելի են:

21) ***«Գործարքի մյուս կողմի անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)»*** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը):

22) ***«Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)»*** սյունակում լրացվում է այն հարկ վճարողի հաշվառման համարը (ֆիզիկական անձի դեպքում՝ ՀԾՀ, իսկ ՀԾՀ-ի բացակայության դեպքում՝ անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը):
23) ***«Գործարքի մյուս կողմի երկիրը»*** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմի ռեզիդենտության երկրի ISO կոդը:
24) ***«Վճարված/ստացված նախնական գումարը»*** սյունակում լրացվում է այն գումարը, որը ներդրումային ծառայություններ մատուցող անձի (նրա հաճախորդի) կողմից վճարվել/ստացվել է նախապես՝ ածանցյալ ֆինանսական գործարքի կնքման պահին:
25) ***«Գրավի առկայությունը»*** սյունակում լրացվում է «առանց գրավի», «մասնակի գրավով», «ամբողջական գրավով», եթե ածանցյալ ֆինանսական գործարքով ստանձնած պարտավորությունների կատարման համար համապատասխանաբար բացակայում է գրավը, առկա է մասնակի գրավ կամ ամբողջական գրավ:
26) ***«Գրավի արժեքը»*** սյունակում լրացվում է գրավի արժեքը (կողմերի կողմից համաձայնեցված արժեք) այն արժույթով, որով արտահայտված է վերջինս: Եթե գործարքի հիմքում ընկած գրավը դրամական միջոցներից տարբեր այնպիսի ակտիվ է հանդիսանում, որը չի գնանշվում որևէ արժույթով, ապա տվյալ գրավի արժեքն անհրաժեշտ է արտացոլել Հայաստանի Հանրապետության դրամով:
27) ***«Գործիքի վերագնահատված արժեքը»*** սյունակը լրացման է ենթակա միայն ամսական հաշվետվությունների դեպքում, որտեղ լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի վերագնահատված արժեքը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ:
28) ***«Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը»*** սյունակը լրացման է ենթակա միայն ամսական հաշվետվությունների դեպքում, որտեղ լրացվում է ածանցյալ ֆինանսական գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը:
29) ***«Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը»*** սույն սյունակում լրացվում է «համաձայն եմ» կամ «համաձայն չեմ»: Ընդ որում՝ «համաձայն եմ» տարբերակը ենթադրում է, որ տվյալ տեղեկությունները ենթակա են գրանցման ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյանում, և որ գործարքի հայտնի կողմը (կողմերը) տվել են իրենց համաձայնությունը՝ հաշվետվության տվյալ տողում լրացված տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու վերաբերյալ: Իսկ «համաձայն չեմ» տարբերակը ենթադրում է, որ տվյալ տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ վերահսկողական, վերլուծական, վիճակագրական և Կենտրոնական բանկի այլ գործառույթների իրականացման նպատակներով օգտագործելու համար:

59. Ի լրումն սույն կանոնակարգի 49-ից 58-րդ կետերով սահմանված լրացման կանոնների՝ Թիվ 6 հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի լրացման համար պետք է պահպանվեն նաև սույն կանոնակարգի 60-ից 71.16-րդ կետերով սահմանված լրացման լրացուցիչ կանոնները:

60. Թիվ 6 հաշվետվության 1-ին աղյուսակում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից բաժնային և (կամ) ոչ բաժնային արժեթղթերով առուվաճառքի, ինչպես նաև հասցեական գործարքների վերաբերյալ տեղեկությունները:

61. Թիվ 6 հաշվետվության 1-ին աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (առք/վաճառք)»*** սյունակում լրացվում է «առք, կամ «վաճառք»՝ կախված հաշվետվություն ներկայացնող ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից գործարքը առք է, թե՝ վաճառք:
2) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
3) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
4) ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես միավոր արժեթղթի գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:
5) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է արժեթղթերի առուվաճառքի գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը (01/01/2025):

62. Թիվ 6 հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված և (կամ) փոփոխված ռեպո գործարքների վերաբերյալ տեղեկություն-

ները: Սույն աղյուսակում անհրաժեշտ է լրացնել բոլոր ռեպո/հակադարձ ռեպո գործարքները (այդ թվում՝ լոմբարդային ռեպո գործարքները), բացառությամբ միջօրյա ռեպո գործարքների: Այն դեպքում, երբ միջօրյա ռեպո գործարքը վերաձևակերպվում է լոմբարդային ռեպո գործարքի, այդ գործարքն անհրաժեշտ է ներառել սույն աղյուսակում, ընդ որում՝ այս դեպքում տվյալ գործարքը ներառվում է հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ: Այն դեպքերում, երբ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքների՝ հաշվետվության մեջ ներառման ենթակա տվյալները հայտնի չեն մինչև գործարքի կնքման օրվա ժամը 16:30-ը, նշված գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ:

63. Բանկերի կողմից «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի միջոցով կնքված յուրաքանչյուր ռեպո (լոմբարդային ռեպո) գործարքների վերաբերյալ տեղեկությունները աղյուսակ 2-ում ներառելիս անհրաժեշտ է հիմք ընդունել հաշվապահական հաշվառման տեսանկյունից տվյալ գործարքի համար հաշվառվող արժեթղթերի ծածկագրերը և դրանց ծավալները՝ ըստ բանկի հայեցողության:

64. Այն դեպքում, երբ Թիվ 6 հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացման ենթակա ռեպո/հակադարձ ռեպո գործարքի հիմքում ընկած են մեկից ավելի տեսակի արժեթղթեր (մեկից ավելի ծածկագիր ունեցող արժեթղթեր), և անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել փոփոխված գործարք, անհրաժեշտ է ներկայացնել գործարքի առարկա հանդիսացող բոլոր արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունները՝ առանձին տողերով՝ անկախ տվյալ տեսակի արժեթղթի վերաբերյալ տեղեկությունների փոփոխության հանգամանքից:

65. Թիվ 6 հաշվետվության 2-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոնների համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)»*** սյունակում նշվում է հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի տեսանկյունից յուրաքանչյուր տողով արտացոլվող գործարքը ռեպո է, թե՝ հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:
2) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն սյունակը չի լրացվում:
3) ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:
4) ***«Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:
5) ***«Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման վերջնաժամկետը (01/01/2025):
6) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի (առաջնային առքի/վաճառքի) վերջնահաշվարկի ամսաթիվը (01/01/2025):

66. Այն դեպքում, երբ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի հիմքում ընկած են մի քանի տեսակի արժեթղթեր (մեկից ավելի ծածկագիր ունեցող արժեթղթեր), այդ գործարքները յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համար լրացվում են առանձին տողով: Ընդ որում՝ «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով», «Քանակը» և «Ընդհանուր գումարը» սյունակներում լրացվում են յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համապատասխանաբար ընդհանուր անվանական արժեքը, քանակը (առկայության դեպքում) և յուրաքանչյուր արժեթղթի դիմաց ստացվող/տրամադրվող դրամական միջոցների ընդհանուր արժեքը:

67. Թիվ 6 հաշվետվության 3-րդ աղյուսակում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժութային ֆորվարդ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

68. Թիվ 6 հաշվետվության 3-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոնների համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆորվարդի հիմքում ընկած արժույթը կամ սակարկվող արժույթը (այսուհետ՝ ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է:

2) ***«Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ISO կոդը»*** սյունակում նշվում է ֆորվարդ գործարքի հիմքում ընկած արժույթի ISO կոդը:
3) ***«Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը»*** սյունակում նշվում է ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը այն արժույթով, որով արտահայտված է տվյալ գումարը:
4) ***«Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը»*** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթի կամ սակարկվող արժույթի (այսուհետ՝ ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթ) ISO կոդը:

69. Սույն կանոնակարգի համաձայն՝ ֆորվարդի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքով.

1) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը հայկական դրամ է, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արժույթը, որի դիմաց տրամադրվում է հայկական դրամը,
2) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը ԱՄՆ դոլար է, իսկ մյուսը՝ հայկական դրամից տարբեր արտարժույթ, ապա ԱՄՆ դոլարն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,
3) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը եվրո է, իսկ մյուսը՝ հայկական դրամից և ԱՄՆ դոլարից տարբեր արտարժույթ, ապա եվրոն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,
4) եթե ֆորվարդով փոխանակվում են հայկական դրամից, ԱՄՆ դոլարից, եվրոյից տարբեր արժույթներ, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արտարժույթը, որի՝ ֆորվարդ պայմանագրով համաձայնեցված ծավալի հարաբերությունը մյուս արտարժույթի՝ ֆորվարդով համաձայնեցված ծավալին ստացվում է 1-ից մեծ:

Ենթադրենք՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձը ֆորվարդ պայմանագրի համաձայն պայմանագրում նշված ժամկետում պետք է տրամադրի հակառակ կողմին որոշակի ծավալով ԱՄՆ դոլար՝ հակառակ կողմից ստանալով որոշակի ծավալով հայկական դրամ, ապա այս դեպքում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում ԱՄՆ դոլարը, իսկ հայկական դրամը համապատասխանաբար՝ ստացվելիք արժույթ և հաշվետվության 8-րդ՝ (Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը) սյունակում նշվում է «AMD»:

70. Թիվ 6 հաշվետվության 4-րդ աղյուսակում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժութային ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

71. Թիվ 6 հաշվետվության 4-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)»*** սյունակում նշվում է .ֆյուչերս առք» կամ «ֆյուչերս վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆյուչերսի հիմքում ընկած արժույթը կամ սակարկվող արժույթը (այսուհետ՝ ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է:
2) ***«Ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ISO կոդը»*** սյունակում նշվում է ֆյուչերս գործիքի հիմքում ընկած արժույթի ISO կոդը:
3) ***«Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը»*** սյունակում նշվում է մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը այն արժույթով, որով արտահայտված է տվյալ գումարը:
4) ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի առարկա բոլոր ֆյուչերսների հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը այն արժույթով, որով արտահայտված է տվյալ գումարը:
5) ***«Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը»*** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթի կամ սակարկվող արժույթի (այսուհետ՝ ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթ) ISO կոդը:

71.1. Սույն կանոնակարգի համաձայն՝ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել 69-րդ կետում սահմանված սկզբունքով:

71.2. Թիվ 6 հաշվետվության 5-րդ աղյուսակում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժեթղթերով ֆորվարդ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

71.3. Թիվ 6 հաշվետվության 5-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»՝ կախված նրանից, թե ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆորվարդի հիմքում ընկած արժեթուղթը գնվում, թե վաճառվում է:

2) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում նշվում է ֆորվարդի հիմքում ընկած մեկ արժեթղթի ձեռքբերման կամ վաճառքի (իրականացման) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

3) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած՝ գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը, ընդ որում, ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

4) ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես ֆորվարդի հիմքում ընկած միավոր արժեթղթի գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

71.4. Թիվ 6 հաշվետվության 6-րդ աղյուսակում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժեթղթերով ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

71.5. Թիվ 6 հաշվետվության 6-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)»*** սյունակում նշվում է «ֆյուչերս առք» կամ «ֆյուչերս վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆյուչերսի հիմքում ընկած արժեթուղթը գնվում, թե վաճառվում է:

2) ***«Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է մեկ ֆյուչերսի հիմքում ընկած՝ գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

3) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում նշվում է ֆյուչերսի հիմքում ընկած մեկ արժեթղթի ձեռքբերման կամ վաճառքի (իրականացման) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

4) ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես ֆյուչերսի հիմքում ընկած միավոր արժեթղթի գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

71.6. Թիվ 6 հաշվետվության 7-րդ և 8-րդ աղյուսակներում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից այլ ակտիվներով (բացառությամբ արժույթի և արժեթղթերի) կնքված ֆորվարդ և ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները: 7-րդ և 8-րդ աղյուսակները լրացվում են համապատասխանաբար սույն կանոնակարգի 71.3-րդ և 71.5-րդ կետերով սահմանված արժեթղթերով ֆորվարդների և արժեթղթերով ֆյուչերսների լրացման հրահանգին համապատասխան: Ընդ որում, ***«Ֆորվարդի հիմքում ընկած ակտիվը»*** կամ ***«Ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվը»*** սյունակներում լրացվում է դրանց հիմքում ընկած ցանկացած ակտիվի անվանումը:

71.7. Թիվ 6 հաշվետվության 9-րդ, 10-րդ և 11-րդ աղյուսակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժութային, արժեթղթերով և այլ ակտիվներով (բացառությամբ արժույթի, արժեթղթերի) օպցիոն գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) առքի և վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկությունները☐

71.8. Թիվ 6 հաշվետվության 9-րդ, 10-րդ և 11-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)»*** սյունակում լրացվում է «օպցիոն առք» կամ «օպցիոն վաճառք»՝ կախված, թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից օպցիոնի առք է, թե վաճառք: Ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից օպցիոնի առք է համարվում իրավունքի ձեռքբերումը գնել (վաճառել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, որի դիմաց ներդրումային ծառայություններ մատուցող անձը հակառակ կողմին (որը ստանձնում է պարտավորություն վաճառել (գնել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը) վճարում է պարգևավճար: Եվ օպցիոնի վաճառք է համարվում պարտավորության ստանձնումը գնել (վաճառել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, որի դիմաց հակառակ կողմը (որը ձեռք է բերում իրավունք վաճառել (գնել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը) ներդրումային ծառայություններ մատուցող անձին վճարում է պարգևավճար:

2) ***«Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)»*** սյունակում լրացվում է «գնման օպցիոն» կամ «վաճառքի օպցիոն»: Գնման օպցիոնի առք նշանակում է, որ գնման օպցիոնի գնորդը իրավունք է ձեռք բերում գնել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Գնման օպցիոնի վաճառք նշանակում է, որ գնման օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Վաճառքի օպցիոնի առք նշանակում է, որ վաճառքի օպցիոնի գնորդը իրավունք է ձեռք բերում վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Վաճառքի օպցիոնի վաճառք նշանակում է, որ վաճառքի օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում գնել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Մի կողմի համար գնման օպցիոնի առքը մյուս կողմի համար նշանակում է գնման օպցիոնի վաճառք: Մի կողմի համար վաճառքի օպցիոնի առքը մյուս կողմի համար նշանակում է վաճառքի օպցիոնի վաճառք:

3) ***«Միավոր արժեքըրի գինը», «Քանակը», «Ընդհանուր գումարը (ծավալը)»*** սյունակները լրացվում են սույն կանոնակարգի 68-րդ և 71.3-րդ կետով սահմանված արժույթով և արժեթղթերով ֆորվարդների լրացման հրահանգին համապատասխան՝ կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվից (այլ ակտիվներով օպցիոնների դեպքում աղյուսակի վերոնշյալ սյունակները լրացվում են 71.3-րդ կետով սահմանված արժեթղթերով ֆորվարդների լրացման հրահանգին համապատասխան):

4) ***«Օպցիոնի կատարման ձևը»*** սյունակում նշվում է «ամերիկյան», եթե օպցիոնը կարող է իրականացվել օպցիոն պայմանագրի ժամկետի ընթացքում ցանկացած օր, կամ «եվրոպական», եթե օպցիոնը կարող է իրականացվել միայն ժամկետը լրանալու օրը, կամ «բերմուդյան», եթե օպցիոնը կարող է իրականացվել նախապես սահմանված օրերին, կամ «բարիեր», եթե օպցիոնը իրականացվում է ավտոմատ, եթե գինը հասնում է ինչ-որ մակարդակի, իսկ այլ տեսակի օպցիոնների դեպքում նշվում է «այլ»:

71.9. Թիվ 6 հաշվետվության 12-րդ, 13-րդ և 14-րդ աղյուսակներում լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված փոխարժեքային, արժութային և տոկոսադրույքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

71.10. Թիվ 6 հաշվետվության 12-րդ, 13-րդ և 14-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ/տրամադրման սվոփ)»*** սյունակում սվոփի հիմքում ընկած արժույթի ներգրավման դեպքում լրացվում է «ներգրավման սվոփ», իսկ սվոփի հիմքում ընկած արժույթի տրամադրման դեպքում՝ «տրամադրման սվոփ»:

2) ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ISO կոդը»*** սյունակում նշվում է սվոփ գործարքի հիմքում ընկած արժույթի ISO կոդը:

3) ***«Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

4) ***«Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձին վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն): Ընդ որում՝ Թիվ 6 հաշվետվության 12, 13 աղյուսակների սվոփի (սվոպ գործարքի) հիմքում ընկած արժույթը որոշվում է 69-րդ կետում սահմանված սկզբունքով: Թիվ 6 հաշվետվության աղյուսակ 14-ի համաձայն՝ սվոփի հիմքում ընկած արժույթը տոկոսային վճարումների հաշվարկման համար հիմք հանդիսացող դրամական միջոցների արժույթն է:

5) ***«Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»*** ենթասյունակում լրացվում է սփոթ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ ***«Գործարքի արժույթի ծավալը»*** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով): Սույն կանոնակարգի 69-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով սվոփի հիմքում ընկած արժույթը որոշելիս երկու արժույթների ծավալների հարաբերության որոշման համար հիմք են ընդունվում սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալները:

6) ***«Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»*** ենթասյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ ***«Գործարքի արժույթի ծավալը»*** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույ-

քի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով): Ընդ որում, փոխանակվող արժույթների ծավալն իր մեջ չի ներառում ներգրավված/տրամադրված արժույթների դիմաց վճարվող/ստացվող տոկոսագումարները (արժութային սվոփի դեպքում):

7) **«Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»** սյունակում լրացվում է սփոթ **գործարքի** փաստացի իրականացման ամսաթիվը:

8) **«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»** սյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

71.11. Թիվ 6 հաշվետվության 15-րդ աղյուսակում լրացվում են 49-րդ կետում սահմանված ժամկետներում կնքված (վերակնքված) և (կամ) կատարված (փակված) փոխարժեքային տարբերության վրա հիմնված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: «Փոխարժեքային տարբերության վրա հիմնված գործարքը» համաձայնություն է երկու կողմերի միջև որոշակի պարբերականությամբ միմյանց միջև փոխանակելու ակտիվի փոխարժեքային տարբերությունները գործարքի կնքման և փակման միջակայքում: Ընդ որում, գործարքի կնքման պահին նախապես չի սահմանվում գործարքի փակման ժամկետը: Ընդ որում.

1) Կնքված է համարվում նոր կնքված գործարքը (նոր բացված դիրքը),
2) Վերակնքված է համարվում նախկինում կնքված գործարքի վերակնքման գործարքը,
3) Կատարված գործարք է համարվում կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերագնահատումը՝ փաստացի (կատարման) փոխարժեքով,
4) Փակված գործարք է համարվում կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերջնական փակումը:

71.12. Հաշվետվության 15-րդ աղյուսակը լրացվում է հետևյալ դեպքերում.

1) գործարքի նոր կնքման դեպքում,
2) նախկինում կնքված (վերակնքված) գործարքի կատարման դեպքում,
3) փակման գործարքի դեպքում, այսինքն՝ գործարքի դիրքերի վերջնական կատարման դեպքում:

71.13. Թիվ 6 հաշվետվության 15-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գնվող/վաճառվող արժույթի ISO կոդը»** սյունակում լրացվում է գործարքի կնքման (վերակնքման) պահին գնվող, կատարման (փակման) պահին վաճառվող արժույթի ISO կոդը:
2) **«Գործարքի արժույթի ISO կոդը»** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով գնվում/վաճառվում է կնքման (վերակնքման), կատարման (փակման) գործարքների առարկա հանդիսացող արժույթը:
3) **«Բացման (վերակնքման) փոխարժեքը»** սյունակում լրացվում է արտարժութային գործարքի կնքման (վերակնքման) պահին գնվող (գնված) միավոր արժույթի ձեռքբերման փոխարժեքը:
4) **«Կատարման փոխարժեքը»** սյունակում լրացվում է գործարքի կատարման պահին գնված արժույթի փաստացի փոխարժեքը (վերակնքման դեպքում) կամ դիրքի փակման պահին վաճառվող (նախկինում գնված) արժույթի փաստացի փոխարժեքը (գործարքի վերջնական փակման դեպքում):
5) **«Օգուտը (եկամուտը)/կորուստը (ծախսը)»** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում առաջացած օգուտը(եկամուտը)/կորուստը(ծախսը)՝ գործարքի արժույթով:
6) **«Գործարքի կնքման (վերակնքման) ամսաթիվը»** սյունակում լրացվում է առաջին անգամ գործարքի կնքման (վերակնքման) ամսաթիվը:
7) **«Գործարքի կատարման (փակման) ամսաթիվը»** սյունակում լրացվում է կնքված (վերակնքված) կամ փակված գործարքի կատարման, կամ վերջնական կատարման ամսաթիվը:
8) **«Գործարքի բնույթը»,** կախված սույն կանոնակարգի 71.11-րդ կետով սահմանված դրույթների համաձայն որոշված գործարքի բնույթից, սույն սյունակում լրացվում է «կնքված»՝ կնքված գործարքի առաջին անգամ ներկայացնելու դեպքում, «կատարված»՝ կնքված (վերակնքված) գործարքի կատարման դեպքում, կամ «փակված»՝ կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերջնական կատարման դեպքում: Ընդ որում, եթե գործարքը կնքվել և փակվել է միևնույն հաշվետու օրվա ընթացքում, ապա սույն սյունակում անհրաժեշտ է նշել «փակված»:

71.14. Թիվ 6 հաշվետվության 16-րդ աղյուսակում լրացվում են 49-րդ կետում սահմանված ժամկետներում կնքված և (կամ) փակված գնային տարբերության վրա հիմնված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: «Գնային տարբերության վրա հիմնված գործարքը» համաձայնություն է երկու կողմերի միջև՝ որոշակի պարբերականությամբ միմյանց միջև փոխանակելու ակտիվի գնային տարբերությունները: Ընդ որում, գործարքի կնքման պահին նախապես չի սահմանվում գործարքի փակման ժամկետը: Ընդ որում.

1) Կնքված է համարվում նոր կնքված գործարքը (ակտիվի ձեռքբերումը),
2) Փակված գործարք է համարվում նախկինում կնքված գործարքի արդյունքում ձեռք բերված ակտիվի վաճառքը:

71.15. Հաշվետվության 16-րդ աղյուսակը լրացվում է հետևյալ դեպքերում.

1) գործարքի նոր կնքման դեպքում,
2) փակման գործարքի դեպքում, այսինքն՝ նախկինում կնքված գործարքի արդյունքում ձեռք բերված ակտիվի վաճառքի դեպքում:

71.16. Ձև 6 հաշվետվության 16-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի տեսակը»*** սյունակում նշվում է գործարքի հիմքում ընկած ակտիվի անվանումը (արժեթուղթ, ոսկի, նավթ և այլն):
2) ***«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի ձեռքբերման (բացման) գինը»*** սյունակում լրացվում է գործարքի կնքման պահին ակտիվի ձեռքբերման գինը:
3) ***«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի վաճառքի (փակման) գինը»*** սյունակում լրացվում է գործարքի վերջնական կատարման (ակտիվի վաճառքի) փաստացի գինը: Սույն սյունակը գնային տարբերության վրա հիմնված գործարքների կնքման դեպքում չի լրացվում:
4) ***«Օգուտը (եկամուտը)/կորուստը (ծախսը)»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում առաջացած օգուտը(եկամուտը)/կորուստը(ծախսը)՝ բացման գնի արժույթով:
5) ***«Գործարքի փակման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է փակված գործարքի վերջնական կատարման ամսաթիվը:
6) ***«Գործարքի բնույթը»***, կախված սույն կանոնակարգի 71.14-րդ կետով սահմանված դրույթների համաձայն որոշված գործարքի բնույթից, սույն սյունակում լրացվում է «կնքված» կամ «փակված»: Ընդ որում, եթե գործարքը կնքվել և փակվել է միևնույն հաշվետու օրվա ընթացքում, ապա սույն սյունակում անհրաժեշտ է նշել «փակված»:»,
7) Կանոնակարգի 78-րդ կետը «վերջի դրությամբ:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ձև 10 հաշվետվություններում ներառվող գումարներն անհրաժեշտ է արտահայտել Հայաստանի Հանրապետության դրամով, ընդ որում՝ արտարժույթով արտահայտված գումարները վերահաշվարկվում են հաշվետու օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ ՀՀ դրամի նկատմամբ համապատասխան արտարժույթի հաշվարկային փոխարժեքով՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:»,

8) Կանոնակարգի 127-րդ կետը «լրացվում է հազար դրամներով:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում՝ այն դեպքերում, երբ նույն օրվա ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը ներկայացնում է և՛ շաբաթական հաշվետվություն, և՛ ամսական հաշվետվություն, ապա այդ օրերի համար շաբաթական և ամսական հաշվետվությունները ներկայացվում են առանձին ֆայլերով:»,

9) Կանոնակարգի Հավելված 6-ում.
   ա. 2-րդ աղյուսակի վերնագրից հանել «ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» բառը, ինչպես նաև աղյուսակում «Գործարքի տեսակը (ռեպո/հ. ռեպո)» և «Ռեպո/հ. ռեպո գործարքի մարման ամսաթիվը» բառերը փոխարինել համապատասխանաբար «Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)» և «Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը» բառերով,
   բ. 4-17-րդ աղյուսակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
10) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 21-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 սեպտեմբերի 2017 թ., N 207-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 207-Ն որոշմամբ

«ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ___________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը	Միավոր արժույթի փոխարժեքը	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար _________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ___________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՖՅՈՒՉԵՐՍ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ____________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (Ֆյուչերս առք/Ֆյուչերս վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆյուչերսների քանակը	Ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Միավոր արժույթի փոխարժեքը	Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը	Ընդհանուր գումարը	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ ___________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ____________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ___________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչեւ մարում եկամտաբերությունը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար՝ ___________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ ___________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 7. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖՅՈՒՉԵՐՍ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ____________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆյուչերսների քանակը	Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժեթղթերի քանակը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթի ծավալը` անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչեւ մարում եկամտաբերությունը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար` ____________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ` ____

ԱՂՅՈՒՍԱԿ 8. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ____________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարք կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարք կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացման համարը	Գործարքի տեսակը (Ֆորվարդ առք/վաճառք կամ Ֆորվարդ վաճառք/առք)	Գործարքի բնույթը	Ֆորվարդ պայմանագրի կնքման ամսաթիվը	Ակտիվի անվանումը	Ակտիվի քանակը	Ընդհանուր գումարը	Արժույթի ISO կոդը	Գործարքի կնքման ժամը	Փոխանցման (վճարման) ամսաթիվը	Վերջնահաշվարկի կարգը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Կնքման/վճարման պահին կիրառվող փոխարժեքը	Կնքման/վճարման պահին կիրառվող փոխարժեքի ISO կոդը	Գործարքի գինը	Գործարքի ծախսերը	Գործարքի ծախսերի ISO կոդը	Գործարքի արժեքը	Ակտիվի արժույթի ISO կոդը	Գործարքի հետ կապված այլ պայմանների նկարագրություն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ___________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 9. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՖՅՈՒՉԵՐՍ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ____________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (Ֆյուչերս առք/Ֆյուչերս վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆյուչերսների քանակը	Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվի քանակը	Ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվը	Միավոր ակտիվի գինը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի ISO կոդը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ___________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 10. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ___________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)	Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)	Գործարքի բնույթը	Օպցիոնի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Միավոր արժույթի փոխարժեքը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը (գումարը)	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Օպցիոնի պարգևավճարի		Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի կատարման ձևը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
																Մեծությունը	Արժույթի ISO կոդը																			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ___________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 11. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ___________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը,հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)	Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Արժույթի ISO կոդը	Արժեթղթի մինչեւ մարում եկամտաբերությունը	Օպցիոնի պարգևավճարի: Մեծությունը	Օպցիոնի պարգևավճարի: Արժույթի ISO կոդը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Գործարքի կնքման վայրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի կատարման ձևը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար` ___________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ` ____________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 12. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ___________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի կնքման ժամը	Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)	Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)	Գործարքի բնույթը	Օպցիոնի հիմքում ընկած ակտիվը	Միավոր ակտիվի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի պարգևավճարի		Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Օպցիոնի կատարման ձևը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
																	Մեծությունը	Արժույթի ISO կոդը																			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար` _________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ` __________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 13. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ____________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

N	Ում հաշվին է գործարքը կնքվել	Անվանումը (անուն, ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Ում անունից է գործարքը կնքվել	Անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի բնույթը	Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ / տրամադրման սվոփ)	Սվոփի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Սփոթ փոխարժեքը	Ֆորվարդ (գործարքի մարման) փոխարժեքը	Գործարքի արժույթի ISO կոդը	Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը: Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը: Գործարքի արժույթի ծավալը	Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը: Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը	Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը: Գործարքի արժույթի ծավալը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի վերջնահաշվարկի բնույթը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի մյուս կողմի անվանումը (անուն ազգանունը, հայրանունը)	Գործարքի մյուս կողմի ՀՎՀՀ (ՀԾՀ)	Գործարքի մյուս կողմի երկիրը	Միջնորդը	Վճարված/ստացված նախնական գումարը	Վճարված/ստացված նախնական գումարի արժույթը	Գրավի առկայությունը	Գրավի արժեքը	Գրավի արժեքի արժույթի ISO կոդը	Գործիքի վերագնահատված արժեքը	Գործիքի վերագնահատված արժեքի ISO կոդը	Գործարքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին տրամադրելու համաձայնությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36
1																																				
2																																				
…																																				

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար ___________________________

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____________________________________

ԱՂՅՈՒՍԱԿ 14. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը ____________________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը ____

